ԼԻԲԵՐԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ.

ՄԻՖԵՐ, ԿԵՂԾ ԹԵԶԵՐ ԵՎ ՆԵՐԸՆՏԻՎՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2024

ԼԻԲԵՐԱԼ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ.

ՄԻՖԵՐ, ԿԵՂԾ ԹԵԶԵՐ ԵՎ ՆԱՐԱՏԻՎՆԵՐ

Երևան 2024

Հայատյացությունն Ադրբեջանում. Միֆեր, կեղծ թեզեր և նարատիվներ, .- Եր.: Լիբերալ քաղաքականության ինստիտուտ, 2024.- 74 էջ

Տվյալների հավաքագրումը և ադրբեջաներենից թարգմանումը՝
Արեն Պետունց՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դասախոս
Վերլուծության հեղինակ՝
Տաթևիկ Արշակյան՝ հասարակագետ-պատմաբան, Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի մագիստրոս

Շարվածքը և գեղարվեստական ձևավորումը՝
Նորայր Բաղդասարյանի

Ձեռնարկը հեղինակել է Լիբերալ քաղաքականության ինստիտուտը՝ ադրբեջանական տարբեր մեդիա տիրույթների՝ 9 ամիս տևած մշտադիտարկման արդյունքների հիման վրա:

Այն նպատակ է հետապնդում ամբողջացնել և համապարփակ ձևով ներկայացնել ադրբեջանական իրականությունում էթնիկ հայերի և Հայաստանի նկատմամբ ատելության դրսևորումները, ինչպես նաև այն միֆերը, կեղծ նարատիվներն ու թեզերը, որոնք սնուցում են Ադրբեջանական Հանրապետությունում առկա համակարգային հայատյացությունը:

Մշտադիտարկումն իրականացվել է 2022թ. նոյեմբերից մինչև 2023թ. հուլիս՝ նախքան Լեռնային Ղարաբաղի բնակչության էթնիկ զտումները:

Կազմի վրա պատկերված էսքիզը Օսմանյան կայսրությունում 20-րդ դարին տեղի ունեցած Սասունի ջարդերի արտացոլումն է ականատեսի աչքերով:

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են
© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ ՀԿ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ 30-ԱՄՅԱ ՕԿՈՒՊԱՆՏ» ԹԵԶԸ 5
«ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵԶԸ 14
«ԷԿՈՑԻԴ»-Ի ԿԵՂԾ ԹԵԶԸ 21
«ՈՒՐԲԻՑԻԴ»-Ի ԿԵՂԾ ԹԵԶԸ 28
«ԻՍԼԱՄԱՖՈԲԻԱ ԵՎ ՄԶԿԻԹՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ» ԿԵՂԾ ԹԵԶԸ 32
«ԵՐԿԱԹԵ ԲՌՈՒՆՑՔԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ» 37
ՀԱՅԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԾԱՂՐԱՆՔ. ՌԱԶՄԱՎԱՐԻ ՊՈՒՐԱԿԸ ԵՎ ՀԱՅ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ 42
«ԱԿԱՆԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ» ԿԵՂԾ ԹԵԶԸ 46
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՋԻՆՎԱԾ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ»-Ի ԿԵՂԾ ԹԵԶԸ 53
«ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՆԵՐ» ԿԵՂԾ ԹԵԶԸ. 56
«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆ»-Ի ՄԻՖԸ 60
ՀԱՏՈՒԿ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՕՐԵՐ. ԵՌԱԿՈՂՄ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ, ԽՈՋԱԼՈՒԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՋԱՐԴԵՐ ԵՎ ԱՅԼՆ 64
«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՏԱՐՈՂ ԿՈՂՄ» ԿԵՂԾ ԹԵԶԸ 68
ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՀԱՐՑԸ 77

ԳԼՈՒԽ 1

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ 30-ԱՄՅԱ ՕԿՈՒՊԱՆՏ» ԹԵԶԸ

Ադրբեջանական զանգվածային լրատվամիջոցներում Հայաստանին ուղղված ատելության խոսքը տարածվում է ոչ միայն պարզապես սոցցանցերում քաղաքացիների մեկնաբանությունների տեսքով, այլ նաև ատելության խոսքի տարածման աղբյուր են դիտարկվում պետական բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները: Ադրբեջանական ԶԼՄ-ներում Հայաստանին ուղղված ատելության խոսքի հիմնական թեզերից մեկը Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական տարածքների օկուպացիան է: Այս թեզի շրջանակներում Հայաստանը ներկայացվում է ոչ միայն որպես 30 տարի ադրբեջանական տարածք օկուպացրած երկիր այլ նաև ագրեսոր, ով այդ տարիների ընթացքում իրականացրել է բազմաթիվ միջազգային քրեական հանցագործություններ: Այս թեզի շուրջ տարածվող ատելության խոսքը մատուցվում է «պրոպագանդայի» տեսքով՝ ինչն իրենից ենթադրում է տվյալ թեզի համակարգված տարածում, քարոզչություն, որը հետապնդում է կոնկրետ նպատակ:

Այս թեզի տարածումը մեծապես իրականացվել է պետական պաշտոնյաների ելույթների, հայտարարությունների, ԱԳՆ մեկնաբանությունների միջոցով, որոնք ջանք չեն խնայել միջազգային հանրության աչքին ևս Հայաստանը որպես օկուպանտ երկիր ներկայացնելու համար: Այս պարագայում գործ ունենք ազդեցության գործակալների հետ, որոնց միջոցով ատելության խոսքի հիմնական հաղորդագրությունն ավելի արագ է հասնում հասարակության տարբեր շերտերին: 2022 թվականի նոյեմբերի 8-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը իր ելույթում նշել է. *«Այսինքն՝ այս միջազգային հարաբերությունները և Ադրբեջանի միջազգային հեղինակությունը մեզ թույլ տվեցին ավելի շատ յուրայիններ ձեռք բերել, և միևնույն ժամանակ մենք համաշխարհային հանրությանը փոխանցեցինք և տեղ հասցրեցինք*

Ղարաբաղի և հայկական օկուպացիայի վերաբերյալ ճշմարտությունները, «մենք մտերիմ հարաբերություններ հաստատեցինք մահմեդական երկրների հետ և կարողացանք նրանց բացատրել, որ Հայաստանը ագրեսիվ քաղաքականություն է վարում ոչ միայն մեր, այլ ողջ մահմեդական աշխարհի դեմ»[1]*:*

Պատկեր 1. Ադրբեջանի նախագահի բոցաշունչ ելույթը նոյեմբերի 8-ին, որի շրջանակներում հնչեցվում են հայերի նկատմամբ ատելության խոսք պարունակող մի շարք արտահայտություններ

Անհրաժեշտ է ընդգծել, որ հայտարարությունն արվել է 2022 թվականի նոյեմբերի 8-ին՝ 44-օրյա պատերազմի համար վճռորոշ դեր ունեցած օրը, ինչը զգայական տեսանկյունից կարող է է՛լ ավելի խոցելի լինել թե՛ այն հասարակության համար, որտեղ հնչում է ատելության խոսքը և թե՛ այն հասարակության՝ այս

[1] Տե՛ս Իլհամ Ալիևի 2022թ. նոյեմբերի 8-ի ելույթը: Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/resmi-xeber/prezident-ilham-eliyev-zefer-gunu-munasibetile-susada-teskil-olunan-tedbirde-istirak-edib-yenilenib-731624?fbclid=IwAR2taAlmIgu7jzzggIXXsdlKbCnoD5-cg_AkELwDWppBqZXvyBeuE5bHcPM

պարագայում հայաստանյան հասարակության, որն ակնհայտորեն ատելության խոսքի թիրախում է: Նման հայտարարությունները ոչ միայն արտահայտում են Ադրբեջանի նախագահի անձնական կարծիքը, այլ նաև հող են նախապատասրտում ցույց տալու, որ Հայաստանն *ագրեսիվ* քաղաքականություն է վարում *բոլոր* մահմեդական պետությունների դեմ, ինչը կարող է սրել հարաբերությունները Հայաստանի և այդ երկրների միջև: Այս նյութն արտատպվել է ավելի քան 29 կայքում:

Հայաստանը որպես օկուպանտ երկիր ներկայացվում է ոչ միայն ադրբեջանական ներքին մեդիայում, այլ նաև այս թեզը տարածվում է միջազգային տարբեր գործընկերների հետ հանդիպումների ընթացքում՝ պաշտոնյաների հնչեցրած հայտարարությունների տեսքով, որոնք իրենց հերթին տարածվում են ոչ միայն ադրբեջանական մամուլում, այլ նաև այն երկրի լրատվամիջոցներում, որտեղ կայանում են հանդիպումները: Օրինակ՝ 2022 թվականի նոյեմբերի 1-ին Իլհամ Ալիևը Ալժիրում կայացած Արաբական պետությունների լիգայի 31-րդ գագաթնաժողովի իր ելույթում նշել է. *«Ադրբեջանն էլ, ինչպես Ալժիրը ժամանակին ենթարկվել է օկուպացիայի: Հայաստանը 30 տարի օկուպացրել է մեր հողերը: Այս տարիների ընթացքում մենք զգացել ենք մեր արաբ եղբայրների աջակցությունը»:*[2] Այս պարագայում Ադրբեջանի նախագահը ոչ միայն արաբական երկրների խոշոր գագաթնաժողովում Հայաստանը ներկայացնում է որպես օկուպանտ երկիր, այլ նաև համեմատություն է կատարում ալիժիրյան իրադարձությունների հետ՝ այսկերպ փորձելով զգայական կապ ստեղծել երկու երկրներում տեղի ունեցած իրադարձությունների մեջ: Նմանօրինակ դետալները կարևոր են քանի որ զգայական տեսանկյունից այս երկրի հասցեատեր հասարակությունը կարող է համեմատություն տանել և Հայաստանն իրապես ընկալել որպես օկուպանտ երկիր: Մեկ այլ

---

[2] Տե՛ս Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի Նոյեմբերի 1-ին Ալժիրում կայացած Արաբական պետությունների լիգայի 31-րդ գագաթնաժողովում ելույթը: Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/resmi-xeber/azerbaycan-prezidenti-torpaqlarimizin-ermenistan-terefinden-isgali-illerinde-ereb-qardaslarimizin-desteyini-hiss-etmisik 730549?fbclid=IwAR3g2vJfYUz30p0F1MjwPkv7jCTRkDqOsQGeLRq_yqHzbqcTcOFNdR4YpC8

օրինակում՝ Հունաստանի ազգային օրվա կապակցությամբ Բաքվում կայացած միջոցառման ժամանակ Ադրբեջանի փոխարտգործնախարար Խալաֆ Խալաֆովը նշել է *«օկուպացիայի ժամանակ մեր քաղաքներն ու գյուղերը, այդ թվում՝ մեր ժողովրդի ազգային մշակութային և պատմական ժառանգությունը, զանգվածաբար ավերվել են» «Այդ ժամանակաշրջանում հայերը նաև քանդել են Քալբաջարի Մեհմանա գյուղի հունական եկեղեցիները և փորձել դրանք ներկայացնել որպես հայկական տաճարներ»:*[3] Նմանօրինակ հայտարարությունները միտված են սեպ խրել հայ-հունական հարաբերությունների մեջ՝ փորձելով մանիպուլացնել հույն հասարակությունը՝ ցույց տալով իբրև թե հայերը մշակութային ցեղասպանություն են իրականացրել հույների դեմ: Ատելության խոսքն այս պարագայում միտված է միջազգային հանրության համար Հայաստանի իմիջը թուլացնելուն և միաժամանակ Հայաստանը որպես ագրեսոր պետություն ներկայացնելուն: Մեկ այլ օրինակում մարտի 14-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Բեռլինում Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հետ համատեղ ճեպազրույցի ժամանակ նշել է. *«Ես ցանկանում եմ, որ գերմանական մամուլի ներկայացուցիչներն իմանան, որ Ադրբեջանը շուրջ 30 տարի գտնվել է հայկական օկուպացիայի տակ», «այս օկուպացիայի և էթնիկ զտումների արդյունքում մեր հողերի մոտ 20 տոկոսը օկուպացվել է, իսկ 1 միլիոն ադրբեջանցիներ Հայաստանի կողմից վտարվել են իրենց հայրենի հողերից և դարձել փախստական»:*[4] Նույնաբովանդակ հայտարարություններով է հանդես եկել նաև Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Սահիբա Գաֆարովան Թուրքմենստան կատարած այցի շրջանակներում:[5] Նման հայտարարությունները միտված են միջազգային հանրության աչքին Հայաստանի դիրքերի թուլացմանը և Հայաստանը

---

[3] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/xelef-xelefov-ermenistandaki-hakim-rejim-bu-gun-de-sulh-prosesinin-mahiyyetini-derk-etmir-756199?fbclid=IwAR1AwJ5FYM4tQ0sNpacqkKLVKg54ENwgbJpYszNU1WyMf9_oiTYkcSX0Q6o

[4] Հասանելի է այստեղ՝ https://news.milli.az/politics/1111780.html

[5] Տե՛ս Սահիբա Գաֆարովայի ելույթը: Հասանելի է այստեղ՝ https://meclis.gov.az/news.php?id=4484&lang=az

որպես ագրեսոր, այն է վտանգավոր պետության ներկայացմանը: Այս պարագայում ատելության խոսքն այլևս միայն ադրբեջանական ներքին մեդիայի խողովակից դուրս է՝ ընդգրկելով նաև միջազգային մամուլը:

Ադրեբջանական մամուլում Հայաստանի դեմ ուղղված ատելության խոսքը դիտարկված ժամանակահատվածում քաղաքական դաշտում տեղի ունեցող իրադարձությունների հետ պայմանավորված սրվել է: Օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետության սենատի կողմից նոյեմբերի 15-ին Հայաստանին աջակցող և Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ առաջարկող բանաձևի ընդունումից հետո, ադրբեջանական մամուլը լեցուն էր բանաձևը դատապարտող հայտարարություններով, որոնք հիմնականում առաջ էին քաշվում Մեջլիսի պատգամավորների կողմից: Այս պարագայում ատելության խոսքի թիրախում հայտնվել է ինչպես Հայաստանի Հանրապետությունը, այնպես էլ Ֆրանսիան: Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Մուսա Գասըմլըն oxu.az-ի հետ զրույցում առաջ է քաշել հետևյալ պնդումները. *«Որտե՞ղ էր Ֆրանսիայի Սենատը, երբ Ադրբեջանի տարածքի մի մասը մոտ 30 տարի գտնվում էր օկուպանտ Հայաստանի ուժի տակ: Ի վերջո, միջազգային իրավունքը և արդարադատությունը շուրջ 30 տարի խախտվել են», «Ինչպես նախորդ բանաձևերը, այս բանաձևի ընդունումը ցույց տվեց, որ ադրբեջանական տարածքները օկուպացված պահելու, մեր պատմամշակութային հուշարձանները ոչնչացնելու, հակամարտությունը չկարգավորելու պատասխանատվությունը ընկնում է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ֆրանսիայի վրա», «Ֆրանսիայի սենատն իրեն հավասարեցրեց ագրեսոր Հայաստանին».*[6] Այս հայտարարությունները ոչ այլ ինչ են քան բացահայտ ատելության խոսք՝ զրպարտանքի միջոցով: Այս պարագայում ոչ միայն Հայաստանն

---

[6] Տե՛ս Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Մուսա Գասըմլըն oxu.az-ի հետ զրույցը: Հասանելի է այստեղ՝https://oxu.az/politics/664519?fbclid=IwAR0hmMA6wWGooxz5cxX6iVrVD_7_xgA7bpiNxMBPyJasvbqigSaonWnssfU

է ներկայացվում որպես օկուպանտ երկիր, այլ նաև Ֆրանսիան՝ որպես օկուպանտ երկրին քաջալերող և օկուպանտ երկրին հավասար երկիր: Նման ձևակերպումները կարող են ընկալվել որպես հակամարտության կարգավորման գործում Ֆրանսիայի դերի թուլացմանն ուղղված հայտարարություններ: Նույն կայքի հետ զրույցի ընթացքում, Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Էլշադ Միրբաշիրօղլուն նշել է. *«Ֆրանսիային հաջողվել է ինչ-որ կերպ ներկայացված լինել ԵԱՀԿ Մինսկի խմբում: Նա առաջ է տարել Հայաստանի օկուպացիոն քաղաքականությունը: Դա անարդյունավետ էր: Այն նպատակ ուներ օրինականացնել Հայաստանի օկուպացիոն քաղաքականության արդյունքները», «Հայաստանի կողմից օկուպացիայի ժամանակ մեր տարածքներում անօրինական գործունեություն են ծավալել ֆրանսիական ընկերությունները: Նրանք ուղղակիորեն մասնակցել են Ադրբեջանի հարստության թալանին»:*[7] Այս պարագայում կասկածի տակ է դրվում Ֆրանսիայի դերը Մինսկի խմբում և միևնույն ժամանակ անհիմն մեղադրանքներ են հնչում ոչ օրինական գործունեությամբ զբաղվելու մասին, սա ատելության խոսքի դրսևորում է՝ զրպարտանքի, ապատեղեկատվություն տարածելու միջոցով:

[7] Տե՛ս Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Էլշադ Միրբաշիրօղլուն oxu.az-ի հետ զրույցը: Հասանելի է այստեղ՝ https://oxu.az/politics/664519?fbclid=IwAR3o6EBkbmoPUZ6tAqwyuQHN7s9xDcTnEQPKYnPAYHh3c_7G0kfpUbZvKrE

Նույնաբովանդակ հայտարարություններով են հանդես եկել նաև պատգամավոր Ֆաթմա Յըլդըրըմը[8], ՄԻՊ Սաբինա Մուսաևան[9], Ադրբեջանի ԱԳՆ-ն[10] և այլք:

Հայաստանը որպես 30-ամյա օկուպանտ թեզի շուրջ ատելության խոսքի սրում արձանագրվել է նաև Լաչինի միջանցքի փակումից հետո՝ հատկապես Ադրբեջանի ԱԳՆ-ի տարածած հաղորդագրությունների և պետական պաշտոնյաների տարածած հայտարարությունների համատեքստում, ընդ որում ատելության խոսքի թիրախում հայտնվել են ոչ միայն Հայաստանը, այլ նաև բոլոր այն միջազգային կազմակերպությունները, որոնք միջամտել են և կոչ արել բացել միջանցքը: Լաչինի միջանցքի փակումը արդարացնելու համար այս պարագայում ևս Ադրբեջանը առաջ է քաշել Հայաստանի կողմից 30 տարիների իրականացրած օկուպացիոն քաղաքականությունը և միջազգային հանցագործությունների կատարման կեղծ օրակարգը: Այսպես՝ Ադրբեջանի ԱԳՆ-ն մեկնաբանելով Եվրոպական միության խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի ելույթը, նշել է. *«Ընդհանրապես Հայաստանի, որը անկախության ձեռքբերման ժամանակաշրջանից սկսած հակասելով միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին ռազմական ագրեսիա և զանգվածային ջարդեր է իրականացրել Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքների դեմ, ավերել է օկուպացված քաղաքներն ու հարյուրավոր գյուղեր, էթնիկ զտումներ իրականացրել ադրբեջանցիների դեմ, հարյուր*

---

[8] Տե՛ս Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ֆաթմա Յըլդըրըմի զրույցի apa.az-ի հետ: Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/fatma-yildirim-fransa-senatinin-azerbaycana-qarsi-qetnamesi-daxili-auditoriya-ucun-nezerde-tutulub 733020?fbclid=IwAR0pTj9KBiDuz6JBQ4R7a5Z7vQLnQvSSab4GuZq4puXrknd99942h393gY

[9] Տե՛ս Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպան Սաբինա Ալիևան հայտարարությունը, որտեղ անդրադարձել է Ֆրանսիայի Հանրապետության սենատի կողմից նոյեմբերի 15-ին ընդունված Հայաստանին աջակցող և Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ առաջարկող բանաձևին: Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/ombudsman-fransa-senatinin-azerbaycan-eleyhine-qebul-etdiyi-qetnameni-pisleyib-732885

[10] Տե՛ս Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարությունը: Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/xin-fransa-senatinin-qebul-etdiyi-qetnameni-qetiyyetle-redd-edirik-video-732809

հազարավոր մարդկանց վտարել հայրենի հողից, չի կատարել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 4 բանաձևերը, մեր տարածքների օկուպացիայից ազատագրումից հետո միջազգային իրավունքին և միջազգային կանոններին հղում անելը, միջազգային կազմակերպություններին դիմելն ու միջամտության կոչ անելը աբսուրդ է»[11]: Այս նյութն արտատպվել է ավելի քան 14 կայքում: 2022թ. դեկտեմբերի 1-ին ադրբեջանական բազմաթիվ լրատվամիջոցներում տեղ են գտել «Հայկական օկուպացիայից Լաչինի ազատագրման երկրորդ տարելիցին» նվիրված նյութեր, որոնք լի են Հայաստանի, Արցախի, հայ ժողովրդի նկատմամբ ատելություն հրահրող արտահայտություններով: Այս թեմայով ադրբեջանական մամուլում տպագրվել է ատելության խոսք պարունակող ավելի քան 17 նյութ:

Լաչինի միջանցքի փակմանը զուգահեռ մայիսի 28-ին Իլհամ Ալիևը հանդիպել է Լաչին «վերադարձող» ադրբեջանցիների հետ, որի ընթացքում նշել է. *«Այրելի թշնամին 30 տարի ավերեց մեր քաղաքներն ու գյուղերը, թողեց ավերակների տակ, չապրեց ու մեզ էլ թույլ չտվեց ապրել»*[12]*:* Հատկանշական է ընդգծել, որ մի կողմից Ադրբեջանի նախագահը տարբեր հարթակներում խոսում է խաղաղասիրության ձգտման և Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման մասին, մյուս կողմից ժողովրդի հետ հանդիպման ժամանակ Հայաստանը ներկայացնում է որպես «ատելի թշնամի», ինչն ուղղված է հասարակության մեջ հայի հանդեպ թշնամանք տարածելուն: Ատելության խոսք պարունակող արտահայտություններով այս նյութը տարածվել է 17 և ավելի կայքերում:

---

[11] Տե՛ս Ադրբեջանի ԱԳՆ-ն մեկնաբանությունը Եվրոպական միության խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի ելույթին: Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no03123

[12] Հասանելի է այստեղ՝ https://sputnik.az/20230528/lham-eliyev-ermeni-azliginin-numayendelerine-daha-ucuncu-devet-olmayacaq-455354059.html

Հարկ է նաև ընդգծել, որ Ադրբեջանի կողմից Հայաստանը որպես օկուպանտ ներկայացնելու թեզը ոչ միայն դրսևորվել է պարզապես հայտարարությունների կամ ելույթների միջոցով, այլ այն արտահայտվել է նաև կոնկրետ պետական պաշտոնական ծրագրում: Ծրագիրը անվանված է «*Ադրբեջանի Հանրապետության օկուպացիայից ազատված տարածքներ մեծ վերադարձի մասին I պետական ծրագիրը*», որը հաստատելու մասին հրամանագիրը ստորագրել է երկրի նախագահը[13]:

[13] Հրամանագիրը հասանելի է այստեղ՝ https://president.az/az/articles/view/57884

ԳԼՈՒԽ 2

«ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵԶԸ

Ադրբեջանական մամուլում տարածվող հաջորդ թեզն ադրբեջանցիների ցեղասպանությունն է, ըստ որի 30 տարիների ընթացքում հայերն իրականացրել են ցեղասպանական գործողություններ և էթնիկ զտումներ: Սրանք ատելության խոսք պարունակող ծանրակշիռ մեղադրանքներ են, որոնք ադրբեջանական ԶԼՄ-ները մատուցում են հասարակությանը՝ պրոպագանդայի և ապատեղեկատվության միջոցով: Նման ձևակերպումները ուղղված են մի կողմից ներքին հասարակության մեջ Հայաստանի նկատմամբ թշնամանքի և լարվածության չափաբաժնի ավելացմանը, մյուս կողմից՝ տարբեր հասարակություններին Հայաստանի վերաբերյալ կեղծ, զրպարտիչ և վախի մթնոլորտ առաջացնող կարծիք հրամցնելուն:

Այս թեզի տարածման մեջ կարևոր է ընդգծել այն փաստը, որ ներկայացնելով իրենց որպես ցեղասպանված ազգ՝ադրբեջանական ԶԼՄ-ները փորձում են ցույց տալ ադրբեջանցիների պատմական անցյալը՝ մատնանշելով իրենց «բազմադարյա» պատմությունը: «Արևմտյան Ադրբեջանի համայնք»-ը Հայաստանի կառավարությանը պահանջ է ներկայացրել և կոչով դիմել միջազգային կազմակերպություններին, որտեղ նշված է. *«Շատ դեպքերում ադրբեջանցիների նկատմամբ իրականացված էթնիկ զտումները պետական իշխանությունների համակարգված գործունեությամբ իրականացվել են բռնության, զանգվածային սպանությունների և մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների, ինչպես նաև մարդու իրավունքների կոպիտ խախտումների միջոցով: Այս գործընթացը հատկապես կատաղի և դաժան է եղել 1905-06, 1918-21, 1948-53 և 1988-91*

թվականներին[14]*:»* Այս դեպքում փորձում են ցույց տալ, որ Հայաստանը ոչ միայն Արցախյան պատերազմի ընթացքում է իրականացրել ցեղասպան գործողություններ, այլև 20-րդ դարի ընթացքում պարբերաբար իրականացրել է «ադրբեջանցիների ջարդ» (անհրաժեշտ է ընդգծել, որ 1905 թվականի պատմական նշումը վերաբերում է հայ-թաթարական բախումներին): Հարկ է նշել, որ այսկերպ Ադրբեջանը մի կողմից Հայաստանը ներկայացնում է որպես ցեղասպան, դաժան պետություն, մյուս կողմից՝ աշխարհին ներկայանում որպես պատմական անցյալ ունեցող պետություն և ազգ: Ընդ որում, ադրբեջանական կողմի պնդման համաձայն՝ Հայաստանը ցեղասպանական գործողություններ կատարում է մինչ այսօր: Օրինակ՝ Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել «Խոջալուի ցեղասպանության» 31-րդ տարելիցի կապակցությամբ, որտեղ նշված է. *«2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը Հայաստանի կողմից իրականացված ռազմական գործողությունների ընթացքում շարունակվել է ադրբեջանցի խաղաղ բնակչության նպատակային թիրախավորումը»*.[15] Նման ձևակերպումները թույլ են տալիս ենթադրելու, որ Հայաստանը դիտմամբ ռազմական գործողությունների մաս է դարձրել խաղաղ բնակչությանը, ինչը միջազգային իրավունքի կոպտագույն խախտում է: Հետևաբար նմանատիպ հայտարարությունները ևս նպատակ ունեն ամեն կերպ թշնամություն, բացասական վերաբերմունք, ատելություն ձևավորել հայերի շուրջ:

Մեկ այլ օրինակում՝ Աբբասգուլու Աղա Բակըխանովի անվան պատմության ինստիտուտի (AMEA) ավագ գիտաշխատող Ռամին Ալիզադեն հոդված է հրապարակել azertag.az-ում, որտեղ հայ քաղաքական կուսակցությունները որակել է որպես «ահաբեկչական»: Մասնավորապես նշված է. *«Այս իրադարձությունները*

---

[14] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/qerbi-azerbaycan/qerbi-azerbaycan-icmasi-ermenistan-hokumetine-teleb-ireli-surub-beynelxalq-teskilatlara-cagiris-edib-741771?fbclid=IwAR0l1J_oQlivOMRZadmEMIj6ke89hn8Zma494PODgeiSPCbLY4VsSfTKS0Q

[15] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no08823

նշանավորեցին Կովկասի նոր պատմության ողբերգական շրջանի սկիզբը: 19-րդ դարի վերջին հայերը, որոնք ստեղծեցին ահաբեկչական քաղաքական կազմակերպություններ, ինչպիսիք են «Արմենականը», «Հնչակ»-ը և «Դաշնակցություն»-ը, սկսեցին իրենց ցեղասպանությունը թուրք-մահմեդական բնակչության դեմ»:[16] Գեներացված ատելության խոսքն ուղղված է ինչպես հայ ազգին ընդհանրական կերպով, այնպես էլ առաջին հայ քաղաքական կուսակցություններին առանձնապես: Ընդգծման է արժանի այն փաստը, որ նշված հատվածում հայերը մեղադրվում են ոչ միայն ադրբեջանցիների, այլ նաև թուրք-մահմեդական բնակչության դեմ իրականացված ցեղասպանության դեմ, ինչը ապատեղեկատվություն լինելուց բացի, հրահրում է լարվածություն և թշնամանք Հայաստանի և մահմեդական ազգերի միջև:

AZƏRTAC

RƏSMİ XRONİKA RƏSMİ SƏNƏDLƏR SİYASƏT İQTİSADİYYAT MƏDƏN

ELM VƏ TƏHSİL

Erməni faşizminin qanlı əməlləri – Bağanis Ayrım, İmarət-Qərvənd, Tuğ, Meşəli və Qaradağlı qətliamları

17.02.2023 [10:13] Çap et A+ A-

Bakı, 17 fevral, AZƏRTAC

Qafqaz regionunun dinc həyatı XIX əsrin əvvəllərində çar Rusiyasının işğalçı müharibələri və müstəmləkə siyasətinin tərkib hissəsi olaraq, ermənilərin köçürülməsi ilə pozuldu. Bu hadisələr Qafqazın yeni tarixində faciəli dövrün başlanğıcı oldu. XIX əsrin sonlarında "Armenakan", "Hnçak" və "Daşnaksutyun" kimi terrorçu siyasi təşkilatlar yaradan ermənilər türk-müsəlman əhalisinə qarşı soyqırımlarına başladılar. XX əsr Anadoluda və Azərbaycanda dinc müsəlman əhalisinə qarşı qanlı əməllər törədən erməni faşizminin tüğyan etdiyi dövr oldu. XX əsrin əvvəllərində erməni silahlı dəstələrinin Şərqi Anadoluda və Azərbaycanda törətdiyi soyqırımları nəticəsində bir milyondan artıq insan öz doğma el-obasını tərk edərək qaçqın vəziyyətinə düşdü, minlərlə insan qətlə yetirildi, yaşayış məntəqələri, tarixi-mədəni abidələr viran edildi, yer-yurd adları qondarma erməni adları ilə əvəz edildi.

Պատկեր 2. Ռամին Ալիզադեի հոդվածից մի հատված որտեղ հայկական քաղաքական կուսակցություններն անվանվում են ահաբեկչական խմբավորումներ:

[16] Հասանելի է այստեղ՝ https://azertag.az/xeber/Ermeni_fasizminin_qanli_emelleri___Baganis_Ayrim_Imaret_Qervend_Tug_Meseli_ve_Qaradagli_qetliamlari-2493326

Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի նախկին զինդատախազ Իլհամ Մամեդովը հյուրընկալվել է Trend BIA-ի «Սահիլ Քարիմլիի հետ ակտուալ» հեղինակային հաղորդաշարին, որի ընթացքում ատելության խոսք է հնչեցրել ուղղված Գարեգին Նժդեհին, ում դիտարկել է որպես «ֆաշիստ»: Նման ձևակերպումները, որոնք հայերին ահաբեկիչներ են որակում կարող են կարծիք ձևավորել հայերի վտանգավորության մասին, քանի որ 21-րդ դարում ահաբեկչությունը երկրների առջև ծառացած ամենավտանգավոր մարտահրավերներից մեկն է: *«Հայերը ադրբեջանական հողերում ապօրինի վերաբնակեցվելուց հետո, երկար տարիներ ցեղասպանություն են իրականացրել մեր ժողովրդի նկատմամբ: Նրանց դաժանության հիմքում ահաբեկիչ Գարեգին Նժդեհի ֆաշիստական գաղափարախոսությունն է: Հայկական պետությունը որպես իր քաղաքական գիծ ընտրել է ահաբեկչությունը: Առաջին Ղարաբաղյան պատերազմի ժամանակ հայերը սարսափելի ռազմական հանցագործություններ են կատարել ադրբեջանցիների նկատմամբ: Մեր տասնյակ բնակավայրերում անխնա ցեղասպանություններ են իրականացվել: Մարդկանց տանջել են անտանելի խոշտանգումներով»:*[17]

Հարկ է նաև նշել, որ կան հատուկ օրեր, որոնց ընթացքում այս թեզը բավական լայն տարածում է գտնում: Դրանցից է մարտի 31-ը, որն Ադրբեջանում հայտարարարված է իբրև թե «ադրբեջանցիների ցեղասպանության օր»՝ այսկերպ պաշտոնական դարձնելով վերոնշյալ թեզը: Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը մարտի 31-ին հայտարարություն է տարածել, նշելով՝ *«105 տարի առաջ՝ 1918 թվականի մարտ-ապրիլին, Բաքվի սովետի մանդատի ներքո գործող դաշնակցական-բոլշևիկյան զինված խմբավորումները տասնյակ հազարավոր խաղաղ ադրբեջանցիների դեմ անողոք ջարդեր են իրականացրել Բաքվում, ինչպես*

[17] Հասանելի է այստեղ՝ https://az.trend.az/azerbaijan/politics/3710045.html, https://www.youtube.com/watch?v=t43M3JMarRE

նաև Շամախիում, Գուբայում, Երևանում, Զանգեզուրի, Ղարաբաղի, Նախիջևանի և Կարսի շրջաններում»:[18] Նյութն արտատպվել է ավելի քան 18 կայքերում: Նույնաբովանդակ հայտարարությամբ հանդես է եկել նաև ՄԻՊ-ը: Այս թեզը շրջանառությունն ավելացել է փետրվարի 25-26-ին, որոնք ադրբեջանցիներին մոտ հիշատակվում են որպես Խոջալուի ցեղասպանության օրեր: Ադրբեջանի բժշկական համալսարանի ավագ դասախոս, «Ոսկե գրիչ» մրցանակակիր Աիդե Բանդալիևան kaspi.az-ի հետ զրուցել է հայ-ադրբեջանական հարաբերություններից, որի ընթացքում նշել է. *«1992 թվականի փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Հայաստանի զինված ուժերը, խախտելով միջազգային իրավական բոլոր նորմերը, ծանր զինտեխնիկա են հանել շրջափակված Խոջալուի խաղաղ բնակչության վրա, նրանց ենթարկել անանախադեպ դաժանության և քաղաքը հողին հավասարեցրել: Ոչ միայն Ադրբեջանի ժողովրդի, այլ ողջ մարդկության դեմ ուղղված սարսափելի հանցագործության արդյունքում իրենց ազգության պատճառով դաժանաբար սպանվել են 613 խաղաղ ադրբեջանցիներ, որոնցից 63-ը երեխաներ էին, 106-ը՝ կանայք, 70-ը՝ տարեցներ: Արդյունքում հիմնովին ոչնչացվել է 8 ընտանիք, 25 երեխա կորցրել է երկու ծնողներին, 130 երեխա՝ ծնողներից մեկին:*[19] Նույնաբովանդակ մեղադրանքներով լեցուն հրապարակումներ կատարվել են նաև պետական մակարդակով:[20] Ընդհանուր հաշվով Խոջալուի ցեղասպանության թեմայով հրապարակվել է ավելի քան 95 նյութ: Հարկ է նշել, որ այս թեզի շրջանակներում ադրբեջանական կողմը ոչ միայն մատնանշում է Հայաստանին որպես ցեղասպան և դաժան կողմ, այլ փորձում է այդ դիտարկումներն անելով ցույց տալ թե որքան մարդասեր և անմեղ է ադրբեջանական կողմը: Ծայրահեղ համեմատություններն ու տարբերությունները մատնանշելը կարող են զգայական մեծ ազդեցություն ունենալ

---

[18] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no18023

[19] Հասանելի է այստեղ՝ https://kaspi.az/aide-bendeliyeva-menfur-dusmen-toretdiyi-cinayet-emellerinden-netice-cixarmir?fbclid=IwAR3zCu

[20] Հասանելի է այստեղ՝ https://president.az/az/articles/view/59044

ընթերցողի վրա: Քանի որ երբ ընթերցողը ծանոթ չէ մանիպուլացիոն հնարներին, կարող է կարծիք ձևավորել այդ մանիպուլացիաների իման վրա: Օրինակ՝ Ադրբեջանի ԱԳՆ մամուլի քարտուղար Այխան Հաջիզադեն տեսակետներ է հայտնել ՀՀ կառավարության նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված մտքերի վերաբերյալ, նշելով. *«Ինչ վերաբերում է վարչապետի հնչեցրած անհեթեթ մտքերին Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների և «ցեղասպանություն» իրականացնելու մտադրության մասին, նկատենք, որ պատմության ընթացքում Ադրբեջանը, ի պատասխան Հայաստանի կողմից ադրբեջանցիների դեմ իրականացված զանգվածային ջարդերի, երբեք չի թիրախավորել խաղաղ բնակչությանը: Հայաստանի քաղաքականությունն ու ահաբեկչական ու զանգվածային ոչնչացման գործողությունները պատմության հիշողության մեջ գրանցված են բոլոր փաստաթղթերով, և դրա ժխտումը վկայում է, որ Հայաստանը չի հրաժարվել այդ գործողություններից».*[21]Նյութն արտատպվել է ավելի քան 16 կայքերում: Մեկ այլ դեպքում ադրբեջանցիները փոռում են արդարացնել իրենց գործողությունները ի պատասխան իբրև թե հայերի կողմից իրականացված «ցեղասպանության»: Օրինակ՝ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Բահրուզ Մահարրամովի զրուցել է APA-ի հետ, որի ընթացքում նշել է. *«Միևնույն ժամանակ, մեր պատմական վրեժը լուծվել է մարդկության դեմ հանցագործությունների համար, որոնք հայերը կատարել են այդ հողերի սկզբնական տերերի՝ ադրբեջանցիների դեմ՝ էթնիկ զտումների նպատակով, սկսած այն ժամանակներից, երբ նրանք տեղափոխվել են տարածաշրջան».*[22] Նման ձևակերպումները արդարացնում են 44-օրյա պատերազմը՝ որպես վրեժ, ինչն է՛լ ավելի թշնամական հարաբերություններ

---

[21] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/ayxan-hacizade-ermenistanin-qanunsuz-fealiyyetlerinin-qarsisinin-alinmasi-azerbaycanin-suveren-huqugudur-756552?fbclid=IwAR02bSm9YcPOT5G6gdjitJI8kNHq8a22qjFZ38hvdizKYG858iAnFMX7sDI

[22] Տե՛ս Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Բահրուզ Մահարրամովի զրույցը APA-ի հետ: Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/daxili-siyaset/deputat-qelebemizin-mustesna-komponentlerinden-biri-de-prezident-ilham-eliyevin-informasiya-savasinda-misilsiz-liderliyi-oldu 731586?fbclid=IwAR170Ojuo1RckRl1QAdjmXQc11odzG42zj61I_YsFZKjzodYNqhp2X5XgLo

կարող է ձևավորել երկու ազգերի միջև: Միևնույն ժամանակ պաշտոնատար անձիք, ովքեր կարող են համարվել ազդեցության գործակալներ, միջազգային հարթակներում ներկայացնում են հորինված փաստեր ադրբեջանական ցեղասպանության մասին: Օրինակ՝ Ադրբեջանի ՄԻՊ Սաբինա Ալիևան դիմել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Կատերինա Ռասելին նշելով. *«Խոջալուի ցեղասպանության ժամանակ 613 մարդու, այդ թվում՝ 63 երեխայի սպանությունը, ինչպես նաև 2011 թվականին հայկական զինված ուժերի կողմից քաղաքացիական բնակավայրերի գնդակոծման հետևանքով Աղդամի շրջանում 9-ամյա Ֆարիզ Բաղալովի, Ֆուզուլիի շրջանում 2017թ-ին դեռ երկու տարին չլրացած Զահրա Գուլիևայի և նրա տատիկի սպանությունը, Թովուզի շրջանում Հայաստանի կողմից մանկական խաղալիքի վրա պայթուցիկ սարք տեղադրելուց և գետը նետելուց հետո դրա գործարկման հետևանքով 13-ամյա Այգուն Շահմալիևայի մահը, երեխաների Հայաստանի կողմից իրականացված ռազմական հանցագործությունների զոհ դառնալու վառ օրինակներ են».*[23] Վերոնշյալ դիմումում ներկայացված փաստերը բավական զգայուն են, քանի որ երեխաների դեմ ուղղված ցանկացած գործողություն բարոյապես անընդունելի է հասարակության համար, ուստի նման ձևակերպումները կարող են զգայական մեծ ազդեցություն ունենալ և առաջացնել վախ և թշնամանք ուղղված հայերին:

[23]Հասանելի է այստեղ՝ https://azertag.az/xeber/Ombudsman_UNICEF_in_Irevan_ofisinin_Azerbaycan_erazisi_ile_bagli_beyanati_teessuf_dogurur-2431556

ԳԼՈՒԽ 3

«ԷԿՈՑԻԴ»-Ի ԿԵՂԾ ԹԵԶԸ

Ադրբեջանական ԶԼՄ-ներում Հայաստանի դեմ ձևավորված ատելության խոսքի հաջորդ թեզը էկոցիդն է, որի համաձայն՝ երեսուն տարիների ընթացքում Հայաստանը պարբերաբար իրականացրել է ադրբեջանական բնական պաշարների ոչնչացում, թալան և ամբողջապես ավիրել է բնությունը: Ադրբեջանի Միլի Մեջլիսի նախագահ Սահիբա Գաֆարովան ապրիլին կայացած ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի 55-րդ լիագումար նիստի արդյունքներին նվիրված ճեպազրույց է ունեցել: Ճեպազրույցում արձագանքել է Ալեն Սիմոնյանին՝ նշելով. *«Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքների 30-ամյա օկուպացիայի ընթացքում մեր անտառներն ու արգելոցները ոչնչացրած, մեր բնական ռեսուրսները ապօրինի շահագործած, հողն ու գետերը աղտոտած երկրի ներկայացուցիչ՝ Հայաստանի խորհրդարանի նախագահը բարոյական իրավունք չունի խոսել Ադրբեջանի ինքնիշխան տարածքներում ցանկացած «էկոլոգիական մտահոգությունների» մասին»*[24]:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ էկոցիդի շուրջ ԶԼՄ-ներում քննարկումները, տարբեր գիտնականների կողմից հոդվածների տպագրությունը մեծ թափ ստացան հատկապես Լաչինի միջանցքի փակումից հետո, որն էլ իր հերթին իրականացվում է էկոակտիվիստների քաղաքացիական անհնազանդությունների քողի տակ: Հայաստանը ներկայացնելով որպես էկոցիդ իրականացրած պետություն՝ ադրբեջանական մամուլը լեցուն է Լաչինի միջանցքի փակումն արդարացնող հրապարակումներով, ընդ որում՝ մամուլում շրջանառվող հրապարակումները

[24] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/sahibe-qafarova-ermeni-spikerin-yalanlarini-ifsa-edib-759325?fbclid=IwAR04eiKXaHIh35hOuprNojkokBAWhcZhbs3Wy0a-vRrUGjzCoMz1JOUTjAg

պատկանում են ոչ միայն պարզապես օգտատերերի կամ գիտնականների, այլ նաև պետական պաշտոնատար անձանց:

Պատկեր 3. Բերձոր-Ստեփանակերտ ճանապարհը շրջափակած ադրբեջանցի կեղծ էկոակտիվիստ, որի ձեռքում երևում է հայտնի սատկած աղավնին:

Ադրբեջանի ՄԻՊ-ն անդրադառնալով Բերձոր-Ստեփանակերտ ճանապարհին ադրբեջանցի «ակտիվիստների» կողմից իրականացվող «ակցիային» նշել է. *«Ակցիայի նպատակն է կանխել Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքներում բնական ռեսուրսների ապօրինի շահագործումն ու թալանը և, որպես հետևանք, այդ գործողությունների արդյունքում շրջակա միջավայրի լուրջ աղտոտումը»*[25]: Այս պարագայում Ադրբեջանի ՄԻՊ-ը ոչ միայն զրպարտում է Հայաստանին բնական ռեսուրսների շահագործման մեջ, այլ նաև պետական պաշտոնյայի մակարդակով արդարացվում է միջանցքի փակումը:

Մեկ այլ օրինակում ԱՄՆ Հյուսթոն քաղաքում ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները ի նշան ռուս խաղաղապահների ժամանակավոր հսկողության

[25] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/sosial/ombudsman-xankendi-lacin-yolu-ile-bagli-qerezli-yanasmalardan-cekinmeye-cagirib-738434?fbclid=IwAR0Ab1dYDe3ch0l1U3w_uuntMl8DkpvzmwfVMl7j7HNadLTjF_lCBgUnaes

տակ գտնվող *«Ադրբեջանի տարածքում օգտակար հանածոների հանքավայրերի ապօրինի շահագործման և Հայաստանի բնապահպանական ահաբեկչության քաղաքականության»* դեմ բողոքի ակցիա են իրականացրել: Ադրբեջանի սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտեի փոխանցմամբ՝ ակցիան կազմակերպվել է «Ամերիկաադրբեջանական ինտեգրացիոն կենտրոն»-ի կողմից: Ակցիան կազմակերպվել է Բերձոր-Ստեփանակերտ ճանապարհին շարունակական «բողոքի ակցիաներ» իրականացնող ադրբեջանցի «էկոակտիվիստներին» և «քաղաքացիական հասարակության» ներկայացուցիչներին աջակցելու նպատակով: Ակցիայի մասնակիցների կողմից օգտագործված պաստառների վրա գրված են եղել *«Ղարաբաղը Ադրբեջան է», «Հայկական ահաբեկչություն», «Կանգնեցե՛ք հայ ահաբեկիչներին», «Դադարեցրե՛ք Ադրբեջանի բնական ռեսուրսների թալանը», «Վերջ հայկական էկոցիդին», «Դադարեցրեք բնապահպանական ահաբեկչությունը Ադրբեջանի տարածքներում»*[26] այլն: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ակցիան իրականացվել է ԱՄՆ-ում և Հայաստանի դեմ ուղղված ատելության խոսքը կարող է տվյալ երկրի հասարակության կողմից ընկալվել որպես բացարձակ ճշմարտություն և Հայաստանի ներկայացումը որպես «ահաբեկիչ» և «էկոցիդ» իրականցնող պետություն ոչ միայն ադրբեջանցիների, այլ նաև Հյուսթոն քաղաքի բնակչության մոտ Հայաստանը կարող է ասոցացվել վտանգավոր և հանցագործութունները խրախուսող պետության հետ: Այս նյութն արտատպվել է ավելի քան 14 կայքերում:

Ընդգծման է արժանի այն փաստը, որը ադրբեջանական մամուլում նաև քննակվում է 44-օրյա պատերազմի ընթացքում Հայաստանի կողմից կատարված էկոցիդի և բնապահպանական ահաբեկչության գաղափարը: Ադրբեջանական APA-ի հետ զրույցում Ադրբեջանի խորհրդարանի բնական պաշարների, էներգետիկայի եւ էկոլոգիայի հանձնաժողովի անդամ Ֆաթմա Յըլդըրըմը նշել է. *«Թշնամին նաեւ*

[26] https://azertag.az/xeber/Icmamiz_Hyuston_seher_meriyasi_onunde_ekoterrora_etiraz_edib-2466287

ֆոսֆորային ռումբեր է կիրառել բնապահպանական ահաբեկչություն իրականացնելու համար»[27]*:* Մեկ այլ օրինակում Ադրբեջանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Սաբինա Ալիևան մասնակցել է «Թուրքիայի Մարդու իրավունքների և իրավահավասարության կազմակերպության» (TIHEK) կողմից Անկարայում կազմակերպված միջազգային սիմպոզիումին, որտեղ անդրադառնալով էկոցիդին ասել է. *«Հետո ուշադրության է հրավիրվել Ղարաբաղյան Երկրորդ պատերազմի և հետպատերազմյան ժամանակաշրջանում, Հայաստանի կողմից արգելված քիմիական զենքի կիրառմամբ դիտավորությամբ կատարված բնապահպանական հանցագործությունների վերաբերյալ հավաքված փաստերի հիման վրա համապատասխան միջազգային կազմակերպություններին՝ այլ երկրների օմբուդսմեններին և մարդու իրավունքների ազգային հաստատություններին ուղարկված զեկույցների, ինչպես նաև միջազգային հանրությանը ուղղված հայտարարությունների և կոչերի վրա»*[28]*:* Քիմիական և ֆոսֆորային զենքերի օգտագործման մատնանշումը ևս կարևոր նշանակություն ունի, քանի որ ընթերողցի մոտ կարող է կարծիք ձևավորվել, թե Հայաստանը խրախուսում է նմանօրինակ զենքերի օգտագործումը և միևնույն ժամանակ դրանք դիտավորյալ օգտագործում է Ադրբեջանի դեմ:

---

[27] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/fatma-yildirim-ermenistan-ekoloji-terroru-serhedde-davam-etdirmek-niyyetindedir-772247?fbclid=IwAR2px5Q9Cdt0tJTvSuEtIHNy606endbBnOI_spkbFlOAsbyxyJEt8SGaMow

[28] Հասանելի է այստեղ՝ https://ombudsman.az/az/view/news/3604/ombudsman-sebine-eliyeva-beynelxalq-simpoziumda-chixish-edib

3.1 «ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԹԱԼԱՆ»-Ի ԿԵՂԾ ԹԵԶԸ

Էկոցիդի հետ մեկտեղ ադրբեջանական մամուլն ու պետական պաշտոնյաները շատ են խոսում Հայաստանի կողմից ադրբեջանական բնական պաշարների թալանի մասին:

Ադրբեջանի Հանրապետության Միլի Մեջլիսի (խորհրդարան) մամուլի և հասարակայնության հետ կապերի բաժինը հաղորդագրություն է տարածել, ըստ որի՝ խորհրդարանի միջխորհրդարանական հարաբերությունների աշխատանքային խմբերը, ինչպես նաև միջազգային հարաբերությունների և միջխորհրդարանական հարաբերությունների հանձնաժողովը, նամակներ են ուղարկել օտարերկրյա պետությունների խորհրդարանների իրենց գործընկերներին՝ Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և բնապահպան ակտիվիստների բողոքի ակցիայի վերաբերյալ: Այնտեղ մասնավորապես նշված է. *«Բողոքի ակցիայի նպատակը ոչ թե ճանապարհը փակելն է, այլ թալանված բնական պաշարների ապօրինի տեղափոխումը կանխելը»* [29]: Բնական պաշարների թալանի միջոցով արդարացվում է Լաչինի միջանցքի փակումը: Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի նախագահի օգնական-նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիևը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ: Մասնավորապես նա գրել է. *«Ուշադրություն եմ հրավիրել Լաչին-Խանքենդի ճանապարհին տեղի ունեցող բողոքի ակցիային Ադրբեջանի քաղաքացիների իրավացի դժգոհության վրա՝ կապված օգտակար հանածոների հանքավայրերի ապօրինի շահագործման և դրա հետևանքով շրջակա միջավայրին վնաս պատճառելու հետ: Շրջափակման հետ կապված Հայաստանի պնդումները*

[29] Հասանելի է այստեղ՝ https://www.meclis.gov.az/news.php?id=4508&lang=az

անհիմն, սև քարոզչական փորձ են»[30]: Այս նյութն արտատպվել է ավելի քան 14 կայքերում: Այստեղ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ վերոնշյալ երկու տեքստերում մի պարագայում միջանցքի փակումը արդարացվում է այն հիմքով, որ հայերը տեղափոխում են ադրբեջանական բնական պաշարները, մյուս պարագայում նշվում է, որ դրանք շահագործման դեմ է ուղղված բողոքի ակցիան: Ակնհայտ երևում է, որ սա ոչ միայն բնապահպանական ակցիա է, այլ բնական պաշարների ոչնչացման քողի տակ քաղաքական ակցիան արդարացնելու միջոց:

Բնական պաշարների թալանի շուրջ թեզը մշտապես ակտուալ է նաև միջազգային գործընկերների հետ հանդիպումների ժամանակ: Օրինակ՝ Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը խոսել է Մոսկվայում ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպմանը հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ: *«Հայաստանը ապօրինի և բարբարոսաբար շահագործել է մեր հանքավայրերը: Կան արտասահմանյան և տեղական փորձագիտական կարծիքներ, որոնք հաստատում են դա: Այս կարծիքները վկայում են, որ Ադրբեջանի էկոլոգիան մեծ վնաս է կրել»:*[31] Սրանք պարզապես հնչեցված արտահայտություններ են առանց կոնկրետ փաստական հիմքեր ցույց տալու, ինչը խոսում է պարզապես բնական պաշարների թալանի թեզը շահարկելով ևս մեկ անգամ Հայաստանին վարկաբեկելու ցանկության մասին: Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի ԱԳՆ-ի փոխանցմամբ՝ 2023 թվականի փետրվարի 27-ին Ադրբեջանը, համաձայն Էներգետիկ խարտիայի պայմանագրի, Հայաստանի դեմ միջպետական արբիտրաժային գործընթաց է սկսել: Ներկայացված դիմումում մասնավորապես նշված է եղել. *«Միևնույն ժամանակ,*

---

[30] Հասանելի է այստեղ՝ https://twitter.com/HikmetHajiyev?ref_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E1605974855819464706%7Ctwgr%5Ead78ea6fe2719e7499ac7a8e5f772fa00820f750%7Ctwcon%5Es2_&ref_url=https%3A%2F%2Foxu.az%2Fpolitics%2F676737

[31] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/nazir-ozunu-ermeni-icmasinin-rehberi-kimi-teqdim-eden-sexsin-qarabaga-hec-bir-aidiyyeti-yoxdur-739120?fbclid=IwAR1ykdmQo-gunX6W1zyG0PuH6eWlLv2buPqXSS_cfIWFBXT2RgMfqyTfsSA

Հայաստանը օկուպացիայի ժամանակ Երևանի ՋԷԿ-ում օգտագործելու նպատակով, անօրինական կերպով շահագործել է Ադրբեջանի Թարթառի շրջանի Զարդաղլրի ածխահանքը»: «Եվ վերջապես, Ադրբեջանի տարածքում լրացուցիչ էներգետիկ ենթակառուցվածքներ կառուցելով, Հայաստանը Ադրբեջանի հիդրոէներգիայի և ածխի պաշարների անօրինական շահագործման համար պայմաններ է ստեղծել»:: «Հայաստանը նաև շարքից հանել է էներգետիկ տարանցման գոյություն ունեցող օբյեկտները, ինչպիսին է Ադրբեջանում Եվլախը Նախիջևանին միացնող բնական գազատարը: Այսպիսով, օկուպացիայի արդյունքում դադարեցվել է Նախիջևան գազամատակարարումը»[32]:

[32] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no09323

ԳԼՈՒԽ 4

«ՈՒՐԲԻՑԻԴ»-Ի ԿԵՂԾ ԹԵԶԸ

Ադրբեջանական ԶԼՄ-ներում Հայաստանը մեղադրվում է նաև 30 տարիների ընթացքում իրականացրած ուրբիցիդի մեջ[33], ինչն իրենից ենթադրում է ադրբեջանական քաղաքների, գյուղերի, բնակավայրերի ոչնչացում: Այս թեզը շարունակաբար տարածվում է ՝ ցույց տալով, որ Հայաստանը վայրագ քայլեր է իրականացրել՝ ոչնչացնելով ադրբեջանական քաղաքներն ու բնակավայրերը, ընդ որում մյուս բոլոր թեզերի նման այս թեզը նույնպես Ադրբեջանի պետական պաշտոնյաները բարձրաձայնում եմ միջազգային հարթակներում՝ ատելության խոսքը մատուցելով պրոպագանդայի և ապատեղեկատվության տեսքով: Միլի Մեջլիսի (խորհրդարան) նախագահ Սահիբա Գաֆարովան Կամբոջայի Թագավորություն կատարած այցի շրջանակներում մասնացել է ASEAN-ի միջխորհրդարանական վեհաժողովի 43-րդ Գլխավոր ասամբլեայի առաջին լիագումար նիստին, որտեղ իր ելույթի ժամանակ նշել է. *«Օկուպացիայի տարիներին Հայաստանը միտումնավոր ավերել է մեր բոլոր քաղաքներն ու գյուղերը և վանդալիզմի ակտ կատարել Ադրբեջանի բոլոր պատմամշակութային և կրոնական հուշարձանների նկատմամբ: Աղդամը, որը ժամանակին Ղարաբաղի ամենամեծ քաղաքն էր, այնքան է ավերվել, որ միջազգային փորձագետներն այն անվանում են «Կովկասի Հիրոսիմա»»*[34]: «Կովկասի Հիրոսիմա» ձևակերպումը ոչ միայն չափազանցություն է, այլ նաև հստակ մանիպուլացիոն ձևակերպում, քանի որ այն ունի զգայական մեծ նշանակություն: Հիրոսիմա քաղաքի ողբերգությունը, որը տեղի ունեցավ ատոմային ռումբի գործածման հետևանքով համեմատվում է Աղդամի հետ

---

[33] Ուրբիցիդը տերմին է, որը բնութագրում է քաղաքի դիտավորյալ կործանումը, ոչնչացումը՝ ուղղակի կամ անուղղակի միջոցներով:

[34] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/sahibe-qafarova-ermenistan-sulh-sazisinin-imzalanmasi-ucun-real-addimlar-atmalidir-733821

և բնականաբար իմանալով Հիրոսիմայի աղետի մասին բոլոր այն մարդկանց մոտ ովքեր երբևէ չեն եղել Աղդամում տպավորություն կարող է ստեղծվել, որ Հայաստանը Աղդամը նույնպես դարձրել է նույնքան աղետալի քաղաք, որքան եղել է Հիրոսիման: Միջազգային մակարդակով նման հայտարարությունները միայն մեկ նպատակ ունեն՝ ատելություն և վախ առաջացնել Հայաստանի նկատմամբ: Նյութը տարածվել է ավելի քան 9 կայքերում:

Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի ԱԳՆ-ն հրապարակել է նյութ, ըստ որի՝ Ադրբեջանը մի շարք ապացույցներ է ներկայացրել ՄԻԵԴ Լաչին քաղաքից և հարակից երկու գյուղերից 2022 թվականի մայիս-օգոստոս ամիսներին Հայաստանի *«դուրս գալու» ժամանակ սեփականության, այդ թվում հարյուրավոր քաղաքացիների տների և այլ բնակելի տարածքների դիտավորյալ և նպատակային ոչնչացման մասին»:*[35] Ընդ որում նյութը ոչ միայն վերաբերում է քաղաքների ոչնչացմանը, այլ նաև այդ քաղաքներում, տներում Հայաստանի կողմից նպատակային պայթուցիկ սարքերի տեղադրմանը, ինչն ավելի վտանգավոր և ահաբեկչական երանգ է տալիս նյութին: Մասնավորապես նշված է. *«Հայաստանի «այրված հողի» քաղաքականության շրջանակներում տների ոչնչացումը, ինչպես նաև պայթուցիկ սարքերի կանխամտածված և հատուկ տեղադրումը քաղաքացիական գույքի վրա, թույլ չեն տալիս ներքին տեղահանված ընտանիքներին և համայնքներին վերադառնալ իրենց նախկին տներն ու հողերը, որոնք նրանք ստիպված են եղել լքել 30 տարի առաջ Հայաստանի անօրինական օկուպացիայի հետևանքով»:*[36]

Նույնաբովանդակ հայտարարությունները տարածվել են պետական պաշտոնյաների կողմից տարբեր երկրներում կայացած հանդիպումների ժամանակ:

---

[35] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/xin-azerbaycan-ermenistanla-bagli-aihm-e-muraciet-teqdim-edib-738574?fbclid=IwAR0jfoxgoL25VMWbeC2LQ1rRDFOVvhKQsi6g6MPeuzqXxtGbRU6HMgIZMLk

Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Սահիբա Գաֆարովան, ով ազդեցության գործակալ է, Ադրբեջանում գտնվող Կուբայի Հանրապետության փոխնախագահ Սալվադոր Անտոնիո Վալդես Մեսայի գլխավորած պատվիրակության հետ հանդիպման ժամանակ նշվել է. *«...օկուպացիայի ժամանակ Հայաստանի կողմից այդ տարածքներում գտնվող մեր բոլոր քաղաքները և գյուղերը, պատմամշակութային և կրոնական հուշարձանները հողին հավասարեցնելու,ինչպես նաև ականային խնդիրների»* մասին:[37]

Պատկեր 4. Ադրբեջանական լրատվական գլխագիր, որտեղ Աղդամը համեմատվում է Հիրոսիմայի հետ:

Ուրբիցիդի շուրջ դիտարկումներ կատարել է նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը նշելով՝ *«Մեր տարածքների մոտ 20 տոկոսը գտնվում էր օկուպացիայի տակ, իսկ օկուպացված տարածքներում գրեթե բոլոր ենթակառուցվածքները,*

[37] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/sahibe-qafarova-kubanin-vitse-prezidenti-ile-gorusub-751445?fbclid=IwAR36dBZM9WQMJbGGGUlel8qDgY7140fspe1qhdpkNH40nH3_WvL_k1zZwfE

շենքերը, այդ թվում՝ պատմական հուշարձանները ոչնչացվել են զավթիչների կողմից»[38]*:* «Զավթիչ» բառն արդեն իսկ հստակ ատելության խոսք է ուղղված Հայաստանին, իսկ շենքերի և ենթակառուցվածքների ոչնչացումն իրենից ենթադրում է այն, որ Հայաստանը դիտավորյալ ոչնչացրել է ադրբեջանական ենթակառուցվածքները: Նյութն արտատպվել է ավելի քան 14 անգամ:

Ընդհանուր առմամբ ուրբիցիդի շուրջ ատելության խոսքը տարածվել է ավելի քան 35 անգամ:

[38] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/resmi-xeber/azerbaycan-prezidenti-ermenistanla-sulh-anlasmasinin-imzalanmasi-qacilmazdir-766401?fbclid=IwAR3ICtMoawkD7uBOUhH4q7LB7t7NX7ZT6L6HnWcZSIZeIE8lWFWCspVMKmk

ԳԼՈՒԽ 5

«ԻՍԼԱՄԱՖՈԲԻԱ ԵՎ ՄԶԿԻԹՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ» ԿԵՂԾ ԹԵԶԸ

Ադրբեջանական ԶԼՄ-ներում շրջանառվող ատելության խոսք քարոզող մյուս թեզը իսլամաֆոբիան է և մզկիթների անարգումը: Տարածվող այս թեզի համաձայն՝ հայերը «օկուպացիայի» ժամանակ տարիներ շարունակ համակարգված ատելություն են քարոզել ադրբեջանցիների դեմ և միևնույն ժամանակ ոչնչացրել և անարգել են Ադրբեջանի մշակութային ժառանագությունը Արցախի տարածքում: ADA համալսարանի կողմից կազմակերպված *«Միջին միջանցքի երկայնքով. աշխարհաքաղաքականություն, անվտանգություն և տնտեսություն»* միջազգային համաժողովի ժամանակ Իլհամ Ալիևն ընդգծել է, որ հայերն իրենց երեխաներին մեծացնում են Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ ատելության ոգով: Նա մասնավորապես նշել է. *«Թուրքոֆոբիան և ադրբեջանաֆոբիան եղել են Հայաստանի գաղափարախոսությունը: Նրանք այնքան առասպելներ են ստեղծել իրենց պատմության և պատմական դեմքերի մասին, որ արդեն սկսել են հավատալ սեփական հորինվածքներին: Հայաստանի ողջ պատմությունը, Հայաստանի ողջ պատմական ժառանգությունը կեղծ է»:* Այստեղ կարող ենք առանձնացնել ատելության խոսքի դրևսորման տարբեր ձևեր: Նախ Ադրբեջանի նախագահը հայերին մեղադրում է ոչ միայն ադրբեջանաֆոբիայի, այլ նաև թուրքոֆոբիայի մեջ, որը կարող է բացասաբար ընկալվել նաև թուրքական հասարակության կողմից: Նման ձևակերպումները ակնհայտ ապատեղեկատվություն են տարածում մեկ նպատակով՝ ստեղծելու լարված հարաբերություններ և հասարակության մեջ ևս մեկ անգամ խորացնելու հայի «թշնամի» լինելու կերպարը: Ադրբեջանի նախագահն իր ձևակերպումներում նաև նշում է Հայաստանի «կեղծ» պատմական անցյալի մասին՝ նպատակ ունենալով ադրբեջանական հասարակության մեջ է՛լ ավելի ամրապնդել

այն գաղափարը, թե հայերն իրենք են գրում և հորինում իրենց պատմությունը՝ առանց պատմական փաստեր և իրադարձություններ հաշվի առնելու:

Ադրբեջանի ՄԻՊ Սաբինա Ալիևան ելույթ է ունեցել «Հեյդար Ալիևի տարվա» շրջանակներում գրքի և հեղինակային իրավունքի համաշխարհային օրվան նվիրված *«հնագույն տեքստերը և դասական աղբյուրները բացահայտում են հայության կեղծիքները կամ հինավուրց ադրբեջանաթուրքական հող Զանգեզուրի ճշմարտությունները»* համաժողովի ժամանակ: Նա նշել է. *«Հատկապես վերջին 30 տարիների ընթացքում ավերվել են մեր ժողովրդին պատկանող պատմական հուշարձանները, մզկիթներն ու սրբավայրերը, թալանվել են մեր բանաստեղծների ու գրողների, մտավորականների տուն-թանգարանները, գնդակոծվել են կիսանդրիները, ոչնչացվել են մեր մշակութային ժառանգության գործերը, դասական վարպետների ձեռագրերը, հափշտակվել և Հայաստանի տարածք են տեղափոխվել շատ արժեքավոր իրեր և հազվագյուտ ցուցանմուշներ»:* Նման հայտարարությունները ևս գալիս են սպասարկելու հայերի կողմից իրականացված այսպես կոչված «մշակութային ցեղասպանության» կեղծ օրակարգը:

Մեկ այլ օրինակում Ադրբեջանի նախագահը Արևելյան գործընկերության հարցերով Եվրամիության հատուկ բանագնաց Դիրկ Շյուբելի գլխավորած պատվիրակության հետ հանդիպմանը անդրադարձել է հայ-ադրբեջանական հարաբերություններին, մասնավորապես նշելով. «*Հայերը պատմական և կրոնական ժառանգությանը վերաբերվել են այնպես, ինչպես ԴԱԵՇ-ն ու Ալ- Քաիդան: Ոչ թե մենք, այլ նրանք: Նրանք ահաբեկչական գործողություններ են կատարել: Նրանք ցեղասպանություն են իրականացրել: Նրանք պայթեցրել են մեր մզկիթները: Մենք չենք արել: Բայց երբ պարոն Փաշինյանն օգտագործում է այս խոսքերը, պետք է իմանա, որ մենք դա լսում ենք: Նա պետք է մտածի, թե մենք ինչպես կարձագանքենք»:* Եվրամիության բանագնացի մոտ Հայաստանի համեմատությունը վերոնշյալ ահաբեկչական կազմակերպութունների հետ ոչ միայն կարող է կարծիք ձևավորել Հայաստանի իբրև թե ահաբեկչական քաղաքականության մասին, այլ նաև

այն կարծես ուղերձ լինի միջազգային հանրությանը՝ Հայաստանի վտանգավորության և ագրեսիվության մասին: Հարկ է նշել, որ այստեղ ևս Ալիևը մեղադրական խոսքեր հնչեցնելով Հայաստանի մասին՝ միևնույն ժամանակ խոսում է Ադրբեջանի անմեղության մասին՝ Ադրբեջանը ներկայացնելով որպես «Հայաստանի զոհ»: «Բարու» և «չարի» այս ծայրահեղությունները զգայական մեծ նշակություն կարող են ունենալ ընթերցողի վրա:

Այս թեզի շրջանակներում ատելության խոսք և մեղադրանքներ ուղղվել են նաև միջազգային հանրությանը: Մարտի 31-ին Ադրբեջանի ԱԳՆ մամուլի քարտուղար Այխան Հաջիզադեն պատասխանել է Իրանի արտաքին գործերի նախարարության մամուլի քարտուղար Նասիր Քանանիի պնդումներին, նշելով. *«Հայտնի է, որ Իրանը թքած ունի Ղարաբաղի և Արևելյան Զանգեզուրի օկուպացիայի և այդ տարածքների կողոպուտի, իրանական շուկաներում այդ տարածքների տներից հանված քարերի վաճառքի, գոյություն ունեցած 67 մզկիթներից 65-ի ոչնչացման և պղծման վրա»:* Նման ձևակերպումների ուղղակիորեն խնդրի մասնակից են դարձնում Իրանին՝ ներքին մեդիասպառողի մոտ տպավորություն առաջացնելով թե Իրանը ևս պատասխանատու է Արցախում կատարված գործողությունների, այդ թվում իբրև թե մշակութային արժեք ներկայացնող հուշարձանների ոչնչացման և վաճառքի մեջ: Սրանք կեղծ մեղադրանքներ են, որոնք է՛լ ավելի կարող են սրել տարածաշրջանային հասարակական հարաբերությունները: Ընդ որում անհրաժեշտ է ընդգծել, որ հայտարարությունը արվել է արտաքին գործերի նախարարության մակարդակով: Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ելույթ է ունեցել ՊՆ Կոմանդոսի զորամասերից մեկին Մարտական դրոշի հանձնման արարողության ժամանակ, որի ընթացքում նշել է. *«Օկուպացիայի ժամանակ մեր քաղաքները հողին են հավասարվել, մեր պատմական հուշարձանները ավերվել, մեր սրբավայրերը պղծվել ու ավերվել են: Դա արել են մեր ատելի հարևանները: Սրա վրա աչք են փակում աշխարհը, միջազգային հանրությունը և ամեն օր Հայաստան այցելող եվրոպացի կոռումպացված պաշտոնյաներն ու պատգամավորները: Ի՞նչն է ստիպում*

նրանց անել այս անարդարությունը: Երկակի ստանդարտներ և կաշառք. սրան այլ բացատրություն չի կարող լինել»: Այստեղ ոչ միայն ատելության խոսքի ուղիղ թիրախում է Հայաստանը՝ որակված լինելով որպես «ատելի հարևան», այլ նաև մեղադրանքների և ատելության խոսքի կիզակետում է միջազգային հանրությունը, մասնավորապես եվրոպացի պաշտոնյաներն ու պատգամավորները: Պիտակավորելով եվրոպացի պաշտոնյաներին և պատգամավորներին որպես «կոռումպացված»՝ ադրբեջանական կողմը ոչ միայն կասկածի տակ է դնում նրանց անաչառությունը, այլ նաև մեղադրում նրանց անտարբերության մեջ, քանի որ նրանք իբրև թե աչք են փակել մշակութային ցեղասպանության վրա: Նման ձևակերպումները կարող են խոչընդոտել եվրոպացի պատգամավորների մասնակցությանը խնդրի կարգավորման գործում և միևնույն ժամանակ ներքին մեդիասպառողի մոտ կարող են ստեղծել կոռումպացված եվրոպացու կերպարը՝ թշնամանք և ատելություն հրահրելով նրանց նկատմամբ: Այս նյութն արտատպվել է ավելի քան 17 կայքերում:

Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեն ելույթ է ունեցել Մոսկվայում կայացած *«Արդարություն և չափավորություն. աշխարհակարգի ապագծային սկզբունքները»* 18-րդ միջազգային մահմեդական համաժողովում, որի ընթացքում նշել է. *«Պատրիարք Կիրիլի ուշադրությանն եմ ներկայացրել նաև հայերի վերաբերմունքը մեր մզկիթների նկատմամբ, վանդալիզմի փաստերը, մեր մզկիթներում խոզեր պահելու հանգամանքը, Ռուս ուղղափառ եկեղեցու ոչնչացման փաստերը, և նա, իհարկե, իր բացասական վերաբերմունքն է արտահայտել այս հարցում»,-ասել է նա:* Նման ձևակերպումները ոչ այլ ինչ են քան ռուս և հայ հասարակությունների հարաբերությունների սրման ուղղված քայլեր, քանի որ ռուս ընթերցողի մոտ կարող է հակակրանք առաջանալ հայերին կատմամբ՝ որպես իրենց մշակութային արժեքները պղծող ազգի: Ընգդրկելով միջազգային այլ երկրներին հայերի կողմից կատարված իբրև թե մշակութային ցեղասպանության մեջ՝ ատելության խոսքի նման

ձևակերպումները նպատակ ունեն միջազգային հանրության աչքին Հայաստանը ներկայացնել որպես միջազգային մակարդակով վանդալիզմ և մշակութային ցեղասպանություն իրականացրած երկիր:

ԳԼՈՒԽ 6

«ԵՐԿԱԹԵ ԲՌՈՒՆՑՔԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ»

Ատելության խոսք և բռնության կոչ պարունակող հաջորդ թեզը երկաթե բռունցքի շահարկումն է, որի համաձայն՝ ադրբեջանական կողմը սպառնում է Հայաստանին կրկին պատերազմել, բռնությունների ենթարկել հայերին, հաղթել նրանց և այլն: Ինչպես մյուս բոլոր թեզերը, այս թեզը ևս ոչ միայն պարզապես սոցիալական ցանցերի օգտատերերի արտահայտած կարծիքն է, այլև պետական հստակ դիրքորոշում: Օրինակ՝ Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության ղեկավար, գեներալ-գնդապետ Ալի Նագիևի ատելության խոսքի դրսևորումներ պարունակող ելույթը տեղ է գտել նաև musavat.com լրատվամիջոցի կայքում, որտեղ նա նշել է. *«Սա շատ վտանգավոր միտում է առաջին հերթին հայկական պետության համար: Ասել եմ, էլի կասեմ, եթե տեսնենք, որ հայկական ֆաշիզմը գլուխ է բարձրացնում, եթե տեսնենք, որ մեր ժողովրդի ու պետության համար վտանգի նոր օջախ է առաջանում, առանց վարանելու հերթական անգամ կջախջախենք հայկական ֆաշիզմը: Թող բոլորն իմանան սա. Պատերազմի ու հաղթանակի խորհրդանիշ «երկաթե բռունցքը» տեղում է, թող ոչ ոք դա չմոռանա»:*[39] Նախ անհրաժեշտ է նշել, որ Նագիևը հասարակության մոջ որոշակի դեր և նշանակություն ունեցող, զինվորական բարձր կոչում ունեցող անձ է, ով կարող է համարվել որպես ազդեցության գործակալ: Նրա ձևակերպումները ոչ միայն ատելության խոսք են պարունակում, այլև ուղիղ կերպով բռնության սպառնալիք են հայերի համար: «Հայկական ֆաշիզմ» ձևակերպումը խոցելի է ցանկացած հասարակության համար, քանի որ ֆաշիզմը պատմության մեջ ամենաշատ

[39]Հասանելի է այստեղ՝ https://www.musavat.com/news/eli-nagiyev-ermenistan-azerbaycanin-tehlukesizliyine-risk-yaradacaq-butun-cirkin-emellerden-cekinmelidir_933990.html

քննադատված և դատապարտված քաղաքական գաղափարախոսություններից մեկն է, ինչն ամենևին չի կապվում պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի որդեգրած որևէ քաղաքական գաղափարախոսության հետ: Նման ձևակերումները միտում ունեն Հայաստանը համեմատելու ֆաշիստական պետությունների և նրանց որդեգրած դաժան քաղաքականության հետ և աշխարհին ցույց տալու, որ Հայաստանը վտանգավորության աստիճանով կարելի է համեմատել ֆաշիստական պետությունների հետ:

Պատկեր 5. Ադրբեջանական ծավալապաշտությունը խորհրդանշող «Երկաթե բռունցք» արձանը Բերձոր բնակավայրում:

Մեկ այլ օրինակում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ելույթ է ունեցել ՊՆ Կոմանդոսի զորամասերից մեկին Մարտական դրոշի հանձնման արարողության ժամանակ, որտեղ նշել է. *«Անցած երկուսուկես տարիների ընթացքում մենք մի քանի անգամ ստիպված ենք եղել ցույց տալ մեր ուժը հայկական կողմին, նախ՝ ի պատասխան նրանց ռազմական սադրանքների: Երկրորդ՝ մենք նրանց ազդանշան ենք ուղարկել, որ եթե իրենց չպահեն, եթե չհարգեն իրենց ստորագրությունը,*

հետևանքներն իրենց համար սարսափելի կլինեն»:[40] Ուղիղ կերպով բռնության և սպառնալիքի այս կոչն արտատպվել է ավելի քան 22 կայքերում: Նման հայտարարությունները կարելի է տեղավորել Ադրբեջանի իշխանությունների, ինչպես նաև ընդդիմադիր շրջանակների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից տարվող ատելության համակարգված քարոզչության շրջանակներում: Ատելության խոսքի նման դրսևորումները ադրբեջանական հասարակության շրջանում հայի կերպարի խեղաթյուրման, որպես մշտական վտանգի աղբյուր, Հայաստանի Հանրապետությունը և հայ ժողովրդին որպես թշնամի ներկայացնելու, դրանով իսկ ադրբեջանական հասարակությանը տարբեր իրավիճակներում ՀՀ-ի դեմ թշնամական գործողություններ իրականացնելուն դրդելու նպատակ են հետապնդում:

Մեկ այլ օրինակում Ֆարիդ Թեյմուրխանլն իր հոդվածում անդրադարձ է կատարում ՀՀ ԱԳՆ հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանի հայտարարություններին, նշելով՝ *«Ուրեմն Հայաստանում ոմն հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյան կա, ով հայտարարություն է արել: Պետք է նշել, որ նրա մտավոր ունակությունները նախկինում էլ էին կասկած հարուցում, բայց Մարուքյանի վերջին հայտարարությունը ցրեց դրանք», Էդմոնդը միջազգային իրավունքի մասին հիշեց այսօր, երբ հայ ագրեսորների գլխին իջած «երկաթե բռունցքը» ամեն ինչ իր տեղը գցեց»:*[41] Այս պարագայում մի կողմից դարձյալ տեսնում ենք երկաթե բռունցքի գաղափարը, ըստ որի ամեն անլուծելի հարց ադրբեջանական կողմը կարող է լուծել բռնության և պատերազմի սկզբունքով՝ հաշվի

---

[40] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/resmi-xeber/prezident-ilham-eliyev-ermenistan-oz-imzasina-hormet-etmese-netice-onlar-ucun-acinacaqli-olacaq
773607?fbclid=IwAR0dkgwZWRXLmQzRXiMP44MNTDn9xO7XJN78XWG953Kpy60IjAuApbohxn4

[41] Հասանելի է այստեղ՝ https://minval.az/news/124289987

չառնելով որևէ իրավունք, մյուս կողմից ակնհայտ է հստակ ատելության խոսք ուղղված Էդմոն Մարուքյանին և հայ ազգին հավաքական կերպով:

Այս թեզի շրջանակներում ևս ատելության խոսք է հնչել այն երկրների հասցեին, որոնք այս կամ այն կերպով աջակցել են Հայաստանին: Օրինակ՝ քաղաքագետ Ազեր Նիֆթիևը sherg.az-ի հետ զրույցում խոսել է իբր հայկական ԶՈՒ-երի կողմից իրականացվող սադրանքների մասին: Նա մասնավորապես նշել է. *«ԱՄՆ Պետդեպարտամենտի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության վերջին հայտարարությունները ցույց են տալիս նաև, որ միջազգային խաղացողները, ովքեր աչք են փակում 30 տարվա օկուպացիայի փաստի վրա, քայլեր են կատարում Ադրբեջանի դեմ: Հենց դրա պատճառով է, որ հայկական զինուժը խախտել է հրադադարի ռեժիմը Քալբաջարի, Լաչինի և Խոջավենդի շրջանների ուղղությամբ: Այս երկու իրադարձությունների միջև ուղիղ կապ կա: Քանի դեռ Հայաստանը չի ստացել պատիժը, այս կերպ կշարունակի իր սադրանքները: Նրանք պետք է խստագույնս պատժվեն: Նրանք իրենց հովանավորների միջոցով Ադրբեջանի սեփական տարածքում ձեռնածություններով են զբաղվում: Այն, որ ադրբեջանական բանակը համարժեք պատասխան է տվել հայկական զինված ուժերին և նրանց տեղը դրել, լուրջ նախազգուշացում է Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությանը»:*[42] Նախ քաղաքագետը մեղադրում է ԱՄՆ-ին և Ֆրանսիային Հայաստանի կողմից հրադադարի ռեժիմի խախտման մեջ, ապա նրանց անվանում է Հայաստանի «հովանավոր», ինչն ակնհայտ ապատեղեկատվություն է: Քաղաքագետը նաև սպառնացել է Հայաստանին ադրբեջանական բանակի ուժգնությամբ: Ադրբեջանական կողմը երկաթե բռունցքի գաղափարն արտահայտում և սպառնալիքներ է հնչեցնում նույնիսկ միջազգային գործընկերների հետ հանդիպումների ժամանակ: Օրինակ՝ Բաքվում տեղի է ունեցել Հյուսիսային

[42] Հասանելի է այստեղ՝ https://sherg.az/aktual/214435?fbclid=IwAR3vzCF6WvfY-pjegNWFCVwjYMv6kFBbG-Kp12YbzCIgH0-8r66VuigkOrI

Մակեդոնիայի արտաքին գործերի նախարար և ԵԱՀԿ գործող նախագահ Բույար Օսմանիի և Ջեյհուն Բայրամովի համատեղ ասուլիսը, որտեղ Բայրամովը նշել է. *«Հայաստանը պետք է ձեռնպահ մնա այս վտանգավոր և սադրիչ գործողություններից, որոնց հետևանքները կարող են ծանր լինել Հայաստանի համար, ինչպես դա եղավ երեկ»:*[43] Ադրբեջանական կողմը ոչ միայն Հայաստանին կեղծ ձևով մեղադրանքներ է հնչեցնում՝ սադրանքներ հրահրելու մասով, այլ նաև սպառնում է ծանր հետևանքներով, ինչն իրենից ենթադրում է պատերազմ:

Երկաթե բռունցքի գաղափարը արտահայտիչ է նաև սոցիալական ցանցերում: Օրինակ՝ ֆեսյբուքյան հարթակում հրապարակված Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Քամալ Ջաֆարովի ելույթի մեկնաբանություններում օգտատերերը թիրախավորել են հայերին նշելով՝ *Ասրված թող նրանց մաքրի երկրի երեսից, պետք է վտարել այնտեղ ապրող բոլոր հայերին: Այլ տարբերակ չկա, վերջ, երկաթե բռունցքը ևս մեկ անգամ ցույց տալու ժամանակն է: Հայերը նրան երբեք այնտեղից չեն հեռացնի:*[44] Այս հայտարարությունները հայերի նկատմամբ ցեղասպանական գործողությունների, բռնությունների, պատերազմ հրահրող ուղիղ կոչեր են:

---

[43] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/ceyhun-bayramov-ermenistanin-destruktiv-yanasmasi-neticesinde-dekabrdan-beri-fiziki-gorusler-olmayib-758778?fbclid=IwAR3nhW-u7AmLERH2ORG_Wm5qFkqOEHoTE-ZN-dz_RBQ0ZTK46AzeGeTgVPc

[44] Տե՛ս հրապարակման մեկնաբանությունները: Հասանելի է այստեղ՝ https://fb.watch/hHgZFNLQ5K/

ԳԼՈՒԽ 7

ՀԱՅԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԾԱՂՐԱՆՔ. ՌԱԶՄԱՎԱՐԻ ՊՈՒՐԱԿԸ ԵՎ ՀԱՅ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Պատկեր 6. Ադրբեջանցի երեխան պատերազմից հետո Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում բացված «Ռազմավարի պուրակում»:

Ադրբեջանական մամուլը լեցուն է նաև հայերի նկատմամբ ծաղր առաջացնող հրապարակումներով, որոնք ուղղված են թե՛ հայ ազգին ընդհանրական կերպով, թե՛ պետական պաշտոնյաներին և թե՛ զինվորներին: Ռազմավարի պուրակը ծաղրի արտահայտման բարձրագույն ձևն էր, որը կարծես ատելության խոսքի նյութականացված տարբերակը լիներ: Մասնավորապես շատ է շահարկվում հայ զինվորների ապիկարության, թուլության, պատերազմի ժամանակ մեծաքանակ դասալիքների և ծաղր պարունակող այլ պատումներ: Ադրբեջանական minval.az կայքում լույս է տեսել հոդված, որում տեղ են գտել Հայաստանի Հանրապետության

վարչապետ Նիկոլ Փաշինյանի հասցեին բազմաթիվ վիրավորական արտահայտություններ, որոնք իրենց մեջ պարունակում են ակնհայտ ծաղր և սպառնալիք: Դրանիցից են օրինակ *«Էլ ավելի վատ է, երբ այս ապուշը, եթե ավելի քաղաքավարի, պարզվում է, նաև «սկունկ-скунс» է, այսինքն՝ գարշահոտն է»: «Իսկ Փաշինյանի՞ մասին: Նրան իր կապիտուլյացիայի երկրորդ փարեդարձը պատվով հաղթահարելու համար ոչ փոկունությունը, ոչ էլ կրթությունը չբավարարարեց»: «Տոկունությունն ու ուղեղը չհերիքեց, Ադրբեջանի նախագահի ելույթը լսելուց հետո դադար վերցնելու, մտածելու համար, թե հիմա ինչպես կառավարի երկիրը, որ նորից չդնի «երկաթե բոունցքի» երկրորդ հարվածի տակ», «Իսկ եթե, ամենայն ազնվությամբ, էլ ի՞նչ է մնում անելու վարչապետի աթոռին նստած այս ոչնչությանը»* արտահայտությունները[45]: Բացահայտ ատելության խոսք պարունակող և անձին թիրախավորող արտահայտություններով լեցուն այս հոդածն ունի շուրջ 2790 դիտում: Մեկնաբանություններում օգտատերերը իրենց հիացմունքն են արտահայտում ատելության մեծ չափաբաժին պարունակող հոդվածի և դրա հեղինակի մասին: Սա ակնհայտ ծաղրանք և վիրավորանք է ուղղված ՀՀ վարչապետին: Ծաղրանքի մեծ չափաբաժին ուղղված է եղել նաև Արցախի իշխանություններին: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ապրիլի 18-ին Սալյանի շրջանում հարցազրույց է տվել, որի ընթացքում նշել է. *«Ազգատրոհականները, որոնք ներկայումս իրենց համար կեղծ անուններ են հորինում: Մեկը իրեն նախագահ է կոչում, մեկը՝ նախարար, մեկ՝ խորհրդարանի խոսնակ, ծաղրածուների այս խումբը վերջապես պետք է իմանա, որ չեն կարող խաղալ մեր համբերության հետ»:*[46] «Ծաղրածուներ», «կեղծ անուններ» և այլ ձևակերպումներն ուղիղ կերպով ծաղրում են Արցախի իշխանություններին՝ ցույց տալով նրանց անընդունելիությունը Ադրբեջանում:

---

[45] Հասանելի է այստեղ՝ https://minval.az/news/124288089

[46] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/resmi-xeber/dovlet-bascisi-separatci-telxekler-toplusu-nehayet-bilmelidir-ki-bizim-sebrimizle-oynamaq-olmaz-760018?fbclid=IwAR1RD0ZOgdcqIzhvO5WaHjG62FeW3vN3GegB4vCbZ8NakROVmLKCdd9vXi0

Մեկ այլ օրինակում Ադրբեջանում իշխող կուսակցության (YAP) Գուբայի շրջանի կառույցի անդամ Նիգար Մամեդովայի հոդվածը տեղ է գտել tehsilforumu.az-ում: Հոդվածի վերնագիրն է.*«44-օրյա պատերազմի ընթացքում Հայաստանում դասալիքների թիվը հասել է 11 հազարի»,* որտեղ նշված է. *«Թույլ, անպատրաստ, խելագարված, հարբած, կեղծ գաղափարներով տոգորված հայոց բանակն այլ ճակատագիր չէր կարող ունենալ: Հայկական բանակում բարոյահոգեբանական պատրաստվածությունը շատ թույլ էր: Պրոֆեսիոնալիզմի մասին խոսք լինել չէր կարող: Մարտական ոգի ընդհանրապես չկար: Սա մենք տեսանք 2016 թվականի ապրիլյան իրադարձությունների ժամանակ»:*[47] Հայ զինվորներին ուղղված ատելության այս խոսքը նպատակ ունի ադրբեջանական հասարակությանը ցույց տալ հայ զինվորների թուլությունը, ձևավորել կարծիք այն մասին, թե հայ զինվորները չեն կռվում իրենց հայրենիքի համար, պրոֆեսիոնալներ չեն և պատերազմի ժամանակ փախել են և դարձել դասալիքներ: Սա ոչ այլ ինչ է քան դիտավորյալ կերպով հայ զինվորի կերպարի խեղաթյուրում և նպատակային նրա թույլ և անպաշտպան կերպարի ընդգծում ադրբեջանական հասարակության մեջ: Մեկ այլ օրինակում kaspi.az-անդրադարձել է հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա իրավիճակին, Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի Եվրոպական միության խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ունեցած ելույթին, ինչպես նաև թեմային առնչվող հարցազրույցներ արել Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Էլշադ Միրբաշիրի և ադրբեջանցի քաղաքագետ Նաթիգ Միրիյի հետ, որտեղ նշված է*«Հայկական բանակում 10 հազարից ավելի դասալիք է գրանցվել: Հիմա, եթե Հայաստանն իր ջախջախված բանակով ցանկանա Ադրբեջանի տարածքում Լաչինի ճանապարհը բացել, իր համար մահապատիժ*

[47] Հասանելի է այստեղ՝ https://tehsilforumu.az/umumi/6687-44-gunluk-muharibe-zamani-ermenistanda-ferarilerin-sayi-11-mine-chatmishdi-.html

կարորագրի».[48] Ձևակերպումներն ուղիղ կերպով ուղղված են հայկական բանակին, օգտագործելով «ջախջախված» բառը, նշելով դասալիքների մեծ թիվ՝ հեղինակը նպատակ ունի ցույց տալու ադրբեջանական կողմի գերակայությունը հայկական բանակի նկատմամբ և միևնույն ժամանակ այս թեզերը պարունակում են բացահայտ սպառնալիքի և բռնության կոչեր:

[48] Հասանելի է այստեղ՝ https://kaspi.az/irevanin-tehdidi-cavabsiz-qalmamalidir?fbclid=IwAR2jj5kpEtgk5rW1E8YyUCNh6VSp7WKWthYtNw_PMQrgLJ4BU-BD68JHFEc

ԳԼՈՒԽ 8

«ԱԿԱՆԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ» ԿԵՂԾ ԹԵԶԸ

Ադրբեջանական մամուլում շրջանառվող հաջորդ թեզն Հայաստանի կողմից իրականացված ականային ահաբեկչությունն է: Այս պատումի համաձայն՝ Հայաստանը շուրջ երեսուն տարի ականներով է պատել Լեռնային Ղարաբաղի տարածքը և միևնույն ժամանակ ականային ահաբեկչություն է իրականացրել 44 օրյա պատերազմից հետո: 2022թ. նոյեմբերի 2-ին Բաքվում հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ տեղի է ունեցել *«Միավորենք մեր ջանքերը հանուն ականազերծ Ադրբեջանի»* համաժողովը, որի արդյունքում հասարակական կազմակերպությունները հայտարարություն են տարածել, որտեղ նշված է. «*Օկուպացիայի ժամանակ զավթիչների կողմից ավերված այս տարածքները ականներով աղտոտելը և ազատագրված այդ տարածքների ականազերծման երկարատև աշխատանքները վերականգնման գործընթացը լրջորեն դանդաղեցնող գործոններից մեկն են: Ժամանակին Հայաստանը այս պատերազմական հանցագործությունը կատարել է ապագայում հնարավոր շինարարական աշխատանքներին հարվածելու նպատակով ... Հայաստանի կողմից Ադրբեջանի դեմ իրականացված ականային ահաբեկչությունը, որի թիրախը հիմնականում խաղաղ բնակիչներն են, ռազմական հանցագործություն է ողջ մարդկության դեմ, լուրջ սպառնալիք խաղաղության և կայունության համար:*[49]» Հայտարարության մեջ Հայաստանի Հանրապետությունը և հայ ժողովուրդը պիտակավորվում են «օկուպանտ», «զավթիչ», «ահաբեկիչ», «ռազմական հացագործ» ձևակերպումներով: Հայաստանի Հանրապետությունը մեղադրվում է երկար տարիներ խաղաղ բնակավայրերը ականապատելու, ականապատման

[49]Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/sosial/qht-ler-ermenistanin-mina-terroru-ile-bagli-beyanat-yayib-730703?fbclid=IwAR32qzwsfhU1ytw344VY2k8Y-1u_UklL6Z1cVyVY6X9wH9r2RYmgVggh2BE

պատշաճ քարտեզներ չտրամադրելու և այս ձևով խաղաղ բնակիչներին միտումնավոր թիրախավորելու մեջ: Սա ուղիղ կերպով ադրբեջանական հասարակության մեջ ձևավորում է կարծիք առ այն, որ ՀՀ-ն բացահայտ կերպով թիրախավորում է խաղաղ բնակիչներին: Ատելության խոսքի նման դրսևորումները, ադրբեջանական հասարակության շրջանում հայի կերպարի խեղաթյուրման, հայերին՝ որպես մշտական վտանգի աղբյուր, ահաբեկիչ թշնամի ներկայացնելու, դրանով իսկ ադրբեջանական հասարակությանը տարբեր իրավիճակներում ՀՀ-ի դեմ թշնամական գործողություններ իրականացնելուն դրդելու նպատակ են հետապնդում: Մեկ այլ օրինակում՝ Azertag.az-կայքում հրապարակվել է *«Նոր հրապարակում հայկական ականային ահաբեկչության ողբերգական հետևանքների մասին» «Մահվան թաքնված սերմերը»»* վերնագրով հոդված, որը վերաբերում է Ադրբեջանում լույս տեսած «*Մահվան թաքնված սերմերը»* գրքին: Նշվում է, որ հոդվածում մեջբերումներն արված են հենց գրքից: *«Ղարաբաղի հնագույն հողը թալանելուց բացի, հայ զավթիչները հարյուր հազարավոր ականներ են տեղադրել: Դարեր շարունակ այստեղ ապրած ադրբեջանցիների և հողի դեմ 30 տարի հանցագործություն կատարած թշնամին բազմաթիվ ականներով է լցրել ոչ միայն դաշտերն ու շփման գծերը, այլև ճանապարհները, արահետները, անցումները և նույնիսկ գերեզմանատները: Նրանք սպասում են իրենց զոհերին: Հայերն իրենց հետ մահ ու արյուն են բերել»:*[50] Այս ձևակերպումներում հայերը հավաքական կերպով ներկայացվում են որպես թշնամի մարդասպաններ, ովքեր թիրախավորում են խաղաղ բնակչության ցանկացած ենթակառուցվածք: Զգայական տեսանկյունից «գերեզմանատներ»-ը ականներով պատելը բավական նուրբ թեմա է հասարակության համար, ուստի սա միանգամայն ուղղված է հայի դաժան կերպար

[50] Հասանելի է այստեղ՝ https://azertag.az/xeber/Ermeni_mina_terrorunun_facievi_neticelerinden_behs_eden_yeni_nesr___Gizli_olum_toxumlari-2486294

ստեղծելուն: Քանի որ մեջբերումներն արված են գրքից, միանգամից պարզ է դառնում, որ գիրքը ևս ողողված է հայերի դեմ ուղղված ատելության քարոզով:

Ականային ահաբեկչության շուրջ ատելության խոսքը սրվեց Լաչինի միջանցքի փակումից հետո: Ադրբեջանական կողմի պնդմամբ՝ Հայաստանը Լաչինի միջանցքն օգտագործել է ականապատման և ականներ տեղափոխելու համար: Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը նոյեմբերի 6-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է, որ Լաչինում մինչ այժմ հայտնաբերվել է ավելի քան 1400 ական, իսկ թե որքան կլինի հետագայում, հայտնի չէ: *«Հայաստանը խախտել է Լաչինի միջանցքի վերաբերյալ եռակողմ հռչակագրի հոդվածը: Այս տարածքներ ականներ բերելը սադրանքները շարունակել է նշանակում: Սա նաև նշանակում է, որ Լաչինի միջանցքն օգտագործվում է այլ նպատակներով: Դուք գիտեք, որ Լաչինի միջանցքը միայն քաղաքացիական նպատակներով կարող է օգտագործվել քաղաքացիների, տրանսպորտի և բեռների համար»:*[51] Ադրբեջանի արտգործնախարարն իր խոսքում Հայաստանի Հանրապետությանը փորձում է ներկայացնել որպես պայմանավորվածություններին հավատարիմ չմնացող, սադրանքներ իրականացնող, խաղաղության պայմանագրի ստորագրման գործընթացը դիտավորյալ ձգձգող և դրան խոչնդոտող կողմի: Մեկ այլ օրինակում ԱՀ ականազերծման գործակալության կառավարման խորհրդի նախագահ Վուգար Սուլեյմանովը Հայաստանին մեղադրել է ականապատումը շարունակելու մեջ. *«Լաչինի շրջանի տարածքում 2021 թվականի հայկական արտադրության հակահետևակային ականների հայտնաբերումը ցույց է տալիս, որ հակառակ կողմը չի դադարեցնում իր խորամանկ գործողությունները» «Չնայած պատերազմի ավարտին, Հայաստանը դեռ ականներ է արտադրում և տեղադրում մեր*

[51] Հասանելի է այստեղ՝ https://sherg.az/aktual/211115

տարածքներում»:[52] Ականային ահաբեկության թեման Ադրբեջանական մամուլն օգտագործել է միջանցքի փակումն արդարացնելու համար, ընդ որում որպես այդպիսին ադրբեջանական մամուլը շահարկում է հասարակության համար զգայական տեսանկյունից նուրբ թեմա՝ այն է տեղափոխված ականների միջոցով խաղաղ բնակիչներին սպանելու գաղափարը: Այս գաղափարները տարածվել են նաև բարձրաստիճան պաշտոնյաների կողմից միջազգային տարբեր կառույցների հետ քննարկումների ժամանակ: Օրինակ՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը անդրադարձել է Լաչինի ճանապարհի հետ կապված միջանկյալ միջոց կիրառելու մասին ՄԻԵԴ որոշմանը: *«Ադրբեջանը նաև իր լուրջ մտահոգությունն է հայտնել Հայաստանի կողմից Լաչինի ճանապարհը 2021 թվականին Հայաստանում արտադրված ականները Ադրբեջան տեղափոխելու համար օգտագործելու առնչությամբ, որոնք ներքին տեղահանված ընտանիքների և համայնքների իրենց տներ վերադարձը կանխելու նպատակով միտումնավոր տեղադրվել են Լաչինի խաղաղ բնակչության տներում»: «Հայերի կողմից միտումնավոր տեղադրված ականները Ադրբեջանում ականների զոհերի թվի աճի պատճառ են դառնում»:*[53] Այս նյութն արտատպվել է ավելի քան 14 կայքերում: Նույնաբովանդակ բողոք ադրբեջանական կողմը ներկայացրել է Արդարադատության միջազգային դատարան՝ *«Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի»* (CERD) շրջանակներում հրատապ միջոցներ ձեռնարկելու նպատակով[54]՝ այս կերպ Հայաստանին

---

[52] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/herbi/anama-minatemizleme-sahesinde-beynelxalq-destek-istediyimiz-seviyyede-deyil
733121?fbclid=IwAR3thnjVzMhSMXfcsOKcoLXnZCx9feBsdi3O5N_QQe1nxUlt4h6kj_S1HDg

[53] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no60022

[54] Հասանելի է այստեղ՝
https://azertag.az/xeber/Azerbaycan_Beynelxalq_Adalet_Mehkemesine_Ermenistanla_bagli_ikinci_muracietini_teqdim_edib-2435321%D5%AE

միջազգային դաշտում ներկայացնելով որպես ռասսայական խտրականություն քարոզող երկիր:

Մեկ այլ օրինակում Ջեյհուն Բայրամովը Ադրբեջանում գտնվող ԿԽՄԿ ներկայացուցչության ղեկավարի հետ քննարկել է Լաչինի ճանապարհի շուրջ ստեղծված իրավիճակը: Անհրաժեշտ է նշել, որ ԿԽՄԿ-ն կարևոր միջազգային կառույց է Լաչինի միջանցքի շուրջ առաջացած իրավիճակում: Քննարկման ընթացքում Բայրամովը նշել է, որ «*բողոքի ակցիաների պատճառը անօրինական տնտեսական գործունեությունն ու այդ նպատակով Լաչինի ճանապարհի շահագործումն է այն տարածքներում, որտեղ ժամանակավորապես տեղակայված է ռուսական խաղաղապահ զորախումբը»: «Բացի այդ, նշվել են շարունակվող ռազմական սադրանքները, Լաչինի ճանապարհով 2021 թվականին Հայաստանում արտադրված ականների տեղափոխումը, խաղաղ բնակչության դեմ ուղղված սպառնալիքները»:*[55] Այս ձևով Ադրբեջանական կողմն ուղիղ կերպով արդարացնում է միջանցքի փակումը:

Ականներ տեղադրելու և ականային ահաբեկչության շուրջ հարցերը Ադրբեջանի արտգործնախարարը ներկայացրել է նաև մի շարք միջազգային հանդիպումների ժամմանակ: 2022թ. դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ նախարարական 29-րդ համաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով Լեհաստանում գտնվող Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը հանդիպել է Սուրբ Աթոռի արտաքին գործերի պետքարտուղար արքեպիսկոպոս Փոլ Ռիչարդ Գալագերի հետ: Հանդիպման վերաբերյալ Ադրբեջանի ԱԳՆ-ի կողմից տարածված հաղորդագրության այն հատվածում, որը ներկայացնում է, թե ՀՀ հետ հարաբերությունների շուրջ ինչ թեմաներ է շոշափել ԱՀ արտգործնախարարը, կան

---

[55] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/ceyhun-bayramov-bqxk-nin-azerbaycandaki-numayendeliyinin-rehberi-ile-lacin-yolu-etrafindaki-veziyyeti-muzakire-edib-738930?fbclid=IwAR1MQbZILG_4hLDPF7grDj8aD3aWpsz-dOIMhOeie5_8vyPRERNz0tyFGxg

ՀՀ-ի նկատմամբ ատելություն հրահրող ձևակերպումներ: Օրինակ՝ «*Նախարարը մյուս կողմին մանրամասն տեղեկություններ է հաղորդել նաև 44-օրյա Հայրենական պատերազմից հետո ստեղծված իրավիճակի, ինչպես նաև օկուպացիայից ազատագրված մեր տարածքներում բնության դեմ կատարված հանցագործությունների մասին, միաժամանակ մանրամասն տեղեկատվություն է տրվել Հայաստանի կողմից իրականացված և շարունակվող ականային սպառնալիքների և այլ սադրանքների մասին»:*[56] Այս նյութն արտատպվել է ավելի քան 10 կայքերում: Նույնաբովանդակ ձևակերպումներ ԱԳ նախարարն արել է նաև Շվեդիայի արտաքին գործերի նախարար Տոբիաս Բիլստրյոմի[57],Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան Ֆերգուս Օուլդի[58], Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության գլխավոր տնօրենի քաղաքական հարցերով տեղակալ Էրիկա Շուտենի[59], Եմենի արտաքին գործերի նախարար Ահմեդ Ավադ Բինմուբարաքի[60], Ուգանդայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Օդոնգո Չեսե Աբուբաքարի[61], Գամբիայի արտաքին գործերի, միջազգային համագործակցության և արտերկրում գտնվող գամբիացիների նախարար Մամադու Տանգարայի[62], Լիտվայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Գաբրիելիուս Լանդսբերգիսի[63], Թուրքիայի և

---

[56]Հասանելի է այստեղ՝ https://azertag.az/xeber/Muqeddes_Taxt_Tacin_dovlet_katibine_ermeni_vandalizmi_barede_meluma_verilib-2394836

[57] Հասանելի է այստեղ՝ https://www.musavat.com/news/ceyhun-bayramov-isvecli-hemkari-ile-gorusub_940354.html

[58] Հասանելի է այստեղ՝ https://mfa.gov.az/az/news/no56922

[59] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/xarici-isler-nazirinin-muavini-elnur-memmedov-niderland-kralligina-sefer-edib-746076?fbclid=IwAR2fExQlpgOFGlc9ufTU4TmYzPoLR_Kqa6rB3VzRkGZBcSg9plo0SFj5YNQ

[60] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no11423

[61] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no11823

[62] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no12023

[63] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no24823

Թուրքմենստանի արտգործնախարարների[64], Մալթայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Յան Բորգի[65] հետ հանդիպումների ժամանակ: Նման մասշտաբի քննարկումներում այս հարցի բարձրաձայնումը ոչ այլ ինչ է քան անհիմն, առանց փաստական հիմքի Հայաստանի միջազգային հեղինակության վարկաբեկում:

[64] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/ceyhun-bayramov-zengezur-dehlizi-orta-dehliz-boyunca-xususi-ehemiyyete-malikdir-737235?fbclid=IwAR1hJFQsYck2qdxw02DKlByV4KNYXBjGKOKp7x5raoEI4TfORmCLfuRhIHI

[65] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/ceyhun-bayramov-malta-xin-rehberi-ile-gorusub-737069?fbclid=IwAR33kvtCS0Eo6Lgft4zNJUT5jCSyOZqjQrjPI8CivCCga71bZl_xWKT99B4

ԳԼՈՒԽ 9

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ»-Ի ԿԵՂԾ ԹԵԶԸ

Ադրբեջանական մամուլը քարոզչության միջոցով մեդիայում տարածում է տեղեկատվություն այն մասին, թե իբրև թե Արցախում գործում են անօրինական զինված խմբավորումներ: Անօրինական զինված խմբավորումներ ասելով ադրբեջանական մամուլում մի կողմից դիտարկում են հայկական զինված ուժերը, մյուս կողմից՝ Արցախի իշխանությունները, որոնք իբրև թե «զավթել» են իշխանությունն Արցախում: ikisahil.az կայքում հրապարակվել է կայքի սյունակագիր Մահիր Ռասուլօղլուի հոդվածը, որում նա անդրադառնում է իբր թե նոյեմբերի 10-ին և 11-ին Արցախից ադրբեջանական դիրքերի ուղղությամբ կրակ բացելու հանգամանքին, ինչպես նաև Նիկոլ Փաշինյանի հայտարարություններին: Նա մասնավորապես նշել է. *«Հրադարի շարունակական խախտումը և տարածաշրջանում խաղաղության ապահովման համար պատասխանատու ոուս խաղաղապահների կողմից որևէ արդյունավետ գործողություն չկատարելը սադրիչ այս փորձերի կապակցությամբ, կարող է անհրաժեշտություն առաջացնել Ղարաբաղում հակաահաբեկչական գործողություններ սկսելու համար»: «Այսինքն՝ երկու օր առաջ իրենց գործունեության երկու տարին բոլորած ոուս խաղաղապահները կամ պետք է զինաթափեին Ղարաբաղի ահաբեկիչներին ու հանձնեին, կամ գոնե ապահովեին նրանց հեռացումը մեր ինքնիշխան սահմաններից»*[66]: Այստեղ մի կողմից Արցախի իշխանությունները որակվում են որպես «ահաբեկչներ», մյուս կողմից արդարացվում են ռազմական գործողությունները՝ «հակաահաբեկչության» քողի տակ: Առհասարակ

[66] Հասանելի է այստեղ՝ ikisahil.az

ահաբեկչությունը մարդկության համար ամենավտանգավոր հացագործությունն է և չկան հասարակություններ, որոնք ահաբեկչությունը կդիտարկեն այլ տեսնակյունից, ուստի ուղիղ կերպով Արցախի իշխանություններին «ահաբեկիչ» որակելը կարող է առաջացնել իրապես անվստահություն չճանաչված պետության ներսում կատարվող իրադարձությունների շուրջ:

Այս թեմայի շուրջ ադրբեջանական մամուլում ատելության խոսքը հատկապես սրվել է մարտի 5-ի իրադարձություններից հետ, երբ Դյուքանլար բնակավայրի մոտակայքում Ադրբեջանը կրակ էր բացել Լեռնային Ղարաբաղի իրավապահ մարմինների ավտոմեքենայի վրա: Մարտի 16-ին Անկարայում կայացած Թյուրքական պետությունների կազմակերպության պետությունների ղեկավարների արտահերթ գագաթնաժողովում իր ելույթում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն ասել է. *«Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը 2022 թվականին Պրահայում և Սոչիում ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը, դեռևս ամբողջությամբ չի դուրս բերել իր զորքերը Ադրբեջանի տարածքներից: Ղարաբաղում մնում են հայկական անօրինական ավազակախմբերն ու հանցավոր տարրերը»:*[67] Այս նյութն արտատպվել է ավելի քան 17 կայքում: «Հայկական ավազակախումբ», «հանցավոր տարրեր» ձևակերպումներն ուղիղ կերպով պիտակավորում են հայկական բանակին և ուղղված են միջազգային հանրությանը ցույց տալու, թե Հայաստանը Արցախում զբաղված է անօրինական, ահաբեկչական գործունեությամբ:

Մյուս կողմից՝ Ադրբեջանի ՄԻՊ Սաբինա Ալիևան հայտնել է, որ «*մարտի 5-ի առավոտյան, հայկական կողմը օգտագործելով Խանքենդի-Խալֆալի-Տուրսու գրունտային ճանապարհը փորձել է զենք և զինամթերք, անձնակազմ, այդ թվում՝ ականներ տեղափոխել Ադրբեջանի տարածքներ, որտեղ ժամանակավորապես*

[67] Հասանելի է այստեղ՝ http://www.musavat.biz/news/prezident-ilham-eliyev-ermenistan-hele-de-oz-qosunlarini-tam-olaraq-azerbaycan-erazilerinden-cixarmayib_964133.html?d=1

տեղակայված է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը»:[68] Նման հայտարարությունների տարածումը միտում ունի արդարացնելու ադրբեջանական կողմի կատարած գործողությունները՝ միևնույն ժամանակ զրպարտելով Հայաստանին: Նույն նպատակը հետապնդող ձևակերպումներ առկա է նաև ռազմական փորձագետ Ադալաթ Վերդիևի Cebhe.info-ի զրույցում, որի ընթացքում նա մասնավորապես նշել է. *«Յուրաքանչյուր գործողության նպատակը Ադրբեջանի տարածքներում հայ ահաբեկիչներին և անօրինական զինված խմբավորումներին չեզոքացնելն է»:*[69]

Մեկ այլ օրինակում Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Բահրուզ Մահարրամովը զրուցել է ադրբեջանական ԱՊԱ լրատվական գործակալության հետ, որի ընթացքում նշել է. *«Մյուս կողմից, միջազգային իրավունքով ճանաչված Ադրբեջանի տարածքներում դեռ կան անօրինական հայկական զինված խմբավորումներ, և նրանք փաստացի պատրաստվում են նոր ագրեսիվ ռազմական գործողությունների»:*[70] Այս պարագայում հայկական խմբավորումները նույնիսկ մեղադրվում են նոր ռազմական գործողությունների մեջ, ինչը բացահայտ ենթադրություն է և դիտավորյալ տարածված ապատեղեկատվություն, քանի որ վերոնշյալ պաշտոնատար անձը ոչ թե խոսում է իր ենթադրության մասին, այլ նշում է «փաստացի» բառը:

---

[68] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/ombudsman-lacin-xankendi-yolunun-uzerinde-nezaret-kecid-menteqesi-yaradilsin-752216?fbclid=IwAR0ZXEgK_s_npyRrj3-zxoB6XuRVOElbNZ_kt7b_Vi9AJuY9brOa_0GUtoM

[69] Հասանելի է այստեղ՝ https://www.cebheinfo.az/siyaset/dusmen-texribatina-cavab-qisas-2-emeliyyati-olacaq?fbclid=IwAR3Bp2PIS--uApsrQ5Cli7a6JUqaYh9z4LnP7LqPfMlkpBcp5Bgfsebbaq8

[70] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/deputat-sulhmeramlilar-bolgede-gerginliyin-artmasina-zemin-yaratmaqdadir-755767?fbclid=IwAR1ZbXeezJtwblquqX2e1dAfdJtAy_id1XxPq91axACHMRWyhSqJwrqFe7s

ԳԼՈՒԽ 10

«ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՆԵՐ» ԿԵՂԾ ԹԵԶԸ

Դիտարկված ժամանակահատվածում ադրբեջանական մամուլում լայն տարածում է գտել նաև Արցախի իշխանություններին ուղղված ատելության խոսքը: Արցախի իշխանություններն ադրբեջանական մամուլում պիտակավորվում են որպես «անջատողական» (սեպարատիստ): Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ապրիլի 18-ին Սալյանի շրջանում հարցազրույց է տվել, որի ընթացքում նշել է. *«Անջատողականները, որոնք ներկայումս իրենց համար կեղծ անուններ են հորինում: Մեկը իրեն նախագահ է կոչում, մեկը՝ նախարար, մեկ՝ խորհրդարանի խոսնակ, ծաղրածուների այս խումբը վերջապես պետք է իմանա, որ չեն կարող խաղալ մեր համբերության հետ»*ում *«Պարզ ասած, այս տզրուկները, այս գիշատիչ կենդանիները չեն հրաժարվում անջատողականներից: Չեն թողնում այս մարդկանց հարմարավետ ապրել, 30 տարի պատանդ են պահել*[71]: Ադրբեջանի նախագահի ելույթը ոչ միայն ողողված է վիրավորանքներով և սպառնալիքով ուղղված Արցախի իշխանություններին, այլ նաև նման ձևակերպումներով Ալիևը փորձում է հրահրել բախում Արցախի ներսում՝ նշելով, որ իբրև թե տեղի բնակիչներն ու իշխանությունները հաշտ չեն և իշխանությունները մարդկանց չեն թողնում ապրել խաղաղ և հարմարավետ: Սա Ալիևի ուղիղ կոչն է՝ ընդունել Ադրբեջանի քաղաքացիությունն ու ապրել հարմարավետ, քանի որ շարունակելով նա նշել է. *«Ղարաբաղում բնակվող հայերը կա՛մ պետք է ընդունեն Ադրբեջանի*

[71] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/resmi-xeber/dovlet-bascisi-separatci-telxekler-toplusu-nehayet-bilmelidir-ki-bizim-sebrimizle-oynamaq-olmaz-760018?fbclid=IwAR1RD0ZOgdcqIzhvO5WaHjG62FeW3vN3GegB4vCbZ8NakROVmLKCdd9vXi0

քաղաքացիություն, կա՛մ իրենց համար այլ բնակության վայր գտնեն»։[72] Ուստի սա բացահայտ սպառնալիք է՝ մարդկանց երկընտրանքի մեջ դնելու միջոցով: Այս նյութն արտատպվել է ավելի քան 20 կայքում:

Մեկ այլ օրինակում՝ ayna.az-ը Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում առկա իրավիճակի, Լաչինի ճանապարհին տեղի ունեցող «ակցիայի» շուրջ զրուցել է ադրբեջանցի ռազմական փորձագետ, պահեստազորի գնդապետ Ուզեիր Ջաֆարովի հետ: Զրույցի ընթացքում նա նշել է. *«Մեպարապիսիտներին մնացած մեր տարածքները մաքրելու համար, մենք այնտեղ ունենք կոմանդոսական ուժեր, հատուկ նշանակության ուժեր և ուժային այլ կառույցներ և նրանք կարող են իրականացնել այս մաքրումը: Սրան պատերազմ անվանելը ճիշտ չի լինի»։*[73] Գնդապետը բացահայտ խոսում է բռնի գործողությունների միջոցով Արցախի իշխանություններին հեռացնելու մասին:

Minval.az կայքի Նուրանի անվամբ սյունակագիրը իր հերթական հոդվածում անդրադարձել է Արցախի քաղաքական վերնախավին, նրանց կողմից արվող հայտարարություններին: Սույն սյունակագրի հոդվածը, ինչպես Հայաստանին, Արցախին և հայ գործիչներին վերաբերող մյուս հոդվածները հագեցած են ատելության խոսքով, քողարկված ատելությամբ, հեգնական և ծաղրող ձևակերպումներով, ինչպես նաև խեղաթյուրված փաստերի մեծ պաշարով: Հոդվածում մասնավորապես նշված է. *«Ադրբեջանական առաջարկները Ղարաբաղի հայերին, այլ ոչ թե նրանց անջատողական վերնախավին նետված «փրկօղակ» են: Ովքեր (նկատի ունի արցախյան քաղաքական վերնախավին) քաջատեղյակ են, որ իրենց կարելի է շատ բան հարցնել՝ ահաբեկչությանն աջակցելուց մինչև*

---

[72] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/resmi-xeber/prezident-qarabagdaki-ermeniler-ya-azerbaycan-vetendasligini-qebul-etmeli-ya-da-ozleri-ucun-basqa-yasayis-yeri-tapmalidirlar-760007?fbclid=IwAR0OOpc5dAkPqHvPX8_K8znmXm2sLFzexBYSeqNMAzcxcACBV7bY4oVqLBE

[73] Հասանելի է այստեղ՝ https://www.ayna.az/vaxt-ermenistanin-eleyhine-isleyir-ve-ya-10-noyabr-2025-ci-il-son-tarixdir?fbclid=IwAR0VD-6Ju3bK8tIKMoc1ZdCkxzGQVYfvqJ3Ptbi5pjzKUmL1A4G9yvoi5k0

օկուպացված տարածքները թալանելը»:[74] Հոդվածի մեկնաբանություններ բաժնում մեկնաբանություն է թողել 5 օգտատեր, ովքեր նշել են. *«Պետք էր գնալ մինչև վերջ և նրանց ամբողջովին դուրս քշել մեր հողերից, ամեն ինչ անօգուտ կլինի, քանի որ սա Կրեմլի (նկատի ունի Ռուսաստանի Դաշնության խաղն է) խաղն է, և այն երբեք չի ավարտվի, մինչև չջախջախես նրանց բոլորին», «Սթափ մտածող հայերի մնացորդները հասկանում են, որ իրենց ներկա իրավիճակում շատախոս հեքիաթասացներ պետք չեն, որ նույնիսկ սիրող հրաշագործներն իրենց ներկա վիճակում չեն օգնի, հիմա նրանց ասվածը, թագավորը, առաջնորդը, սպիտակ հայրը Ադրբեջանի մեծահոգի առաջնորդն է: Ըստ իս դրանց բոլորին վերջին 30 տարվա վայրագությունների համար պետք է թույնել առնետի թույնով», «Մինչեւ ե՞րբ են Արայիկը, Ռուբենը, Դավիթը և մյուս սրիկաները ազատ շրջելու Ադրբեջանի տարածքում: Մեր հատուկ ջոկատայինները ինչու՞ դեռ չեն կալանավորել այս ավազակներին», «Ավելի լավ է ճանապարհիդ առյուծ լինի, քան տանդ ապրող հայ».*[75] Նախ հարկ ենք համարում նշել, որ հոդվածում արդեն իսկ Արցախի իշխանությունները մեղադրվում են «ահաբեկիչներ» և «օկուպանտներ» լինելու մեջ, իսկ մեկնաբանողները ոչ միայն ատելության խոսք պարունակող արտահայտություններ են օգտագործում հայերի մասին խոսելիս, այլ նաև բռնության կոչ են անում՝ ընդհուպ հայերի մահ «առնետի թույնի միջոցով»: Սա խոսում է այն մասին, որ ադրբեջանական մեդիայում հասարակության անդամները ևս ընդգրկված են հայերի նկատմամբ ատելության խոսք տարածելուն, ինչից պարզ է դառնում, որ թե՛ պետական պաշտոնյաները և թե՛ հասարակության անդամները ունեն ձևավորված կարծիք և արժեհամակարգ հայերի հանդեպ, ինչը խոսում է ատելության խոսքի տարածման ձևավորված հստակ մեխանիզմների և համակարգի մասին:

---

[74] Հասանելի է այստեղ՝ https://minval.az/news/124289724

[75] Տե՛ս հոդվածի մեկնաբանությունները: Հասանելի է այստեղ՝ https://minval.az/news/124289724

Այս թեզի շրջանակներում ատելության խոսք է հնչել նաև ուղղված Ֆրանսիային: Պատգամավոր Մալահաթ Իբրահիմզըզըն ելույթ է ունեցել *«Իսլամաֆոբիան որպես ռասիզմի և խտրականության հատուկ ձև. նոր գլոբալ և անդրազգային մարտահրավերներ»* թեմայով կոնֆերանսի ժամանակ, որտեղ նա մասնավորապես նշել է. *«Ֆրանսիայի նախագահ Մակրոնը պաշտպանում է այսպես կոչված պետության իրավունքներն Ադրբեջանի ինքնիշխան տարածքում: Ֆրանսիան միջամտում է գրեթե բոլոր երկրների ներքին գործերին. Նմանապես, նա աջակցություն է ցուցաբերում Ղարաբաղում հայերի անջատողականությանը»*.[76] Սա անուղղակի կերպով մեղադրանք և բացասական արձագանք է ուղղված Ֆրանսիայի քաղաքականությանը՝ նպատակ ունենալով բացասական կարծիք ձևավորել բոլոր այն երկրների մասին, որոնք այս կամ այն կերպով աջակցում են Արցախին:

[76] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/deputat-fransa-prezidenti-azerbaycanin-suveren-erazisinde-qondarma-dovletin-qondarma-haqlarini-mudafie-edir-754215?fbclid=IwAR3Ar-PZlh88CcsEZAn29NWp0R6Kw_zjffRIHN0J9lbTVj0zSoC6xqB94GM

ԳԼՈՒԽ 11

«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆ»-Ի ՄԻՖԸ

Ադրբեջանական մեդիայում շրջանառվող հաջորդ պատումը պատմական է, ըստ որի Հայաստանն իբրև թե հիմնված է ադրբեջանական հողերի վրա, որը նրանք անվանում են «Արևմտյան Ադրբեջան»: Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Սահիբա Գաֆարովան հունվարի 9-ին ելույթ է ունեցել *«Ասիայի խորհրդարանական վեհաժողովի 13-րդ»* լիագումար նիստում: Ելույթի ընթացքում նա անդրադարձել է այսպես կոչված *«արևմտյան ադրբեջանցիների» (ադրբեջանական իշխանությունները արևմտյան ադրբեջանցիներ են անվանում Հայաստանի Հանրապետության տարածքում երբևէ բնակված ադրբեջանցիներին) իրավունքներին:*[77] Hafta.az-ը այսպես կոչված Արևմտյան Ադրբեջանի և արևմտյան ադրբեջանցիների իրավունքների վերաբերյալ զրուցել է ադրբեջանցի բանասիրական գիտությունների թեկնածու Իբրահիմ Բայրամովի հետ, որի ընթացքում նշվել է. *«Ադրբեջանի ժողովուրդը՝ թուրքերը, պատմության տարբեր ժամանակաշրջաններում իրենց պապենական հողերում ենթարկվել են աննախադեպ անարդարության, իրավունքների խախտման և էթնիկ զտումների»: «Հայերը «Արմեն» ցեղերի անունով Հայաստան ստեղծելու հավակնությունները կառուցել են թուրքերի հողերի յուրացման և նրանց արյունը խմելու հաշվին: Եթե նայենք Հարավային Կովկասում Հայաստան կոչվող երկրի տեղակայման աշխարհագրությանը, ապա պարզ երևում է «հիվանդ Հայաստան» կոչվող սիբիրախտի ստեղծման նպատակը: Հայաստանն իրականություն է դարձել ադրբեջանական հողերի օկուպացիայի, ադրբեջանցիների ջարդի, ցեղասպանության, մեր ազգային ու բարոյական ռեսուրսների թալանի միջոցով: Նրա խորամանկ պնդումը շարունակվում է մեր նոր ժամանակներում, նույնիսկ*

[77] Հասանելի է այստեղ՝https://meclis.info/news/qrbi-azrbaycanllarn-huquqlar-brpa-olunacaq/

այսօր»[78], *«Արևմտյան Ադրբեջանը ադրբեջանցիների պատմական հայրենիքն է: Արևմտյան Ադրբեջանը մեր պատմական հողն է, դա հաստատվում է բազմաթիվ պատմական փաստաթղթերով, պատմական քարտեզներով, մեր պատմությամբ»*:[79] Նախ անհրաժեշտ է ընդգծել, որ նշված հատվածում թուրքերն ու ադրբեջանցիները նույնացվում են միմյանց հետ և տեքստը ոչ միայն թշնամանք է հրահրում հայերի հանդեպ ադրբեջանական հասարակության մեջ, այլ նաև թուրքական, քանի որ հայերը ներկայացվում են որպես թուրքերի հողերը յուրացրած և ջարդ իրականացրած ազգ: Տեքստում բազմաթիվ անգամներ հնչում են կեղծ մեղադրանքները և վիրավորանքներն ուղղված Հայաստանին, *«հիվանդ Հայաստան», «սիբիրախտ»* ձևակերպումները բացահայտ ատելություն քարոզող պիտակավորումներ են: Այսկերպ Ադրբեջանը փորձում է արդարացնել իր տարածքային հավակնությունները Հայաստանի նկատմամբ՝ առաջ բերելով Արևմտյան Ադրբեջանի կեղծ օրակարգը:

Մեկ այլ օրինակում՝ Արևմտյան Ադրբեջանի համայնքի կառավարման խորհրդի նախագահ Ազիզ Ալաքբարովը, նշել է. *«Հայերն այս տարածաշրջան բերեցին անախորժություններ, անջատողականություն և հակամարտություններ: 19-րդ դարի ընթացքում նրանք հենվելով իրենց հովանավորների վրա, այն տարածքներում, որտեղ տեղափոխվել են, էթնիկ զտումների քաղաքականություն են իրականացրել մեր հարազատների նկատմամբ»*:[80] Հետաքրքրական է դիտարկել այն փաստը, որ ադրբեջանական նման ձևակերպումները չեն արտահայտում միայն ադրբեջանցիների տարածքային խնդիրները, ադրբեջանական կողմը խնդրին

---

[78] Հասանելի է այստեղ՝ https://hafta.az/qerbi-azerbaycana-qayitmaq-haqqimizdir--Ibrahim-bayramov-337767-xeber.html?fbclid=IwAR3LRGTJwXOYi3Ro-hAE16Wqx5Myzir6m7UaN_Etg_8EUlKbba5oDyFwe_g

[79] Հասանելի է այստեղ՝ https://hafta.az/qerbi-azerbaycana-qayitmaq-haqqimizdir--Ibrahim-bayramov-337767-xeber.html?fbclid=IwAR3LRGTJwXOYi3Ro-hAE16Wqx5Myzir6m7UaN_Etg_8EUlKbba5oDyFwe_g

[80] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/qerbi-azerbaycan/icma-xalqimiza-qarsi-son-200-ilde-ermeniler-terefinden-toredilmis-soyqirimilari-faktlarla-masa-uzerine-qoyuruq-756749?fbclid=IwAR3ulNfUZx7EU3L7BgJ0xclELlQn4q4gC-7I2CGZdHs77zEMVjz0B6TO4Z4

փորձում է ներառել նաև այլ կողմերի, օրինակ վերոնշյալ օրինակում հայերը մեղադրվում են ամբողջ տարածաշրջանում կատարած հանցագործությունների մեջ, իսկ տարածաշրջանը չի ընդգրկում միայն Ադրբեջանը, այլ նաև հարևան այլ պետություններ ինչպիսիք են Իրանը, Վրաստանը: Ուստի այսկերպ նման ձևակերպումները հրահրում են բախումներ նաև տարածաշրջանային այլ պետությունների հետ: Ընդ որում՝ պատմական նման կեղծ պնդումները միտում ունեն միայն ու միայն ներկայացնելու, որ Հայաստանը պատմական անցյալ չունի և հիմնվել է այլ պետությունների տարածքների վրա:



Պատկեր 7. Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներն արտացոլող քարտեզ, որտեղ ՀՀ տարածքը ներկայացված է որպես «ադրբեջանական»՝ արևմտյան Ադրբեջան, իսկ հայկական բնակավայրերը ներկայացված են սնոտի ադրբեջանական անվանումներով:

Ազիզ Ալաքբարովը ելույթ է ունեցել նաև «Հեյդար Ալիևի տարվա» շրջանակներում գրքի և հեղինակային իրավունքի համաշխարհային օրվան նվիրված *«հնագույն տեքստերը և դասական աղբյուրները բացահայտում են հայության*

կեղծիքները կամ հինավուրց ադրբեջանաթուրքական հող Զանգեզուրի ճշմարտությունները» համաժողովի ժամանակ, որտեղ նշել է. *«Վերջին 200 տարում մեր ժողովրդի և ոչ միայն մեր ժողովրդի, այլև Հարավային Կովկասի բոլոր ժողովուրդների գլխին եկած բոլոր ողբերգությունների հիմքում ընկած են հայկական կեղծիքներն ու հայկական ստերը»: «Հայերը էթնիկ ծագում չունեն, հայ պատմաբաններն իրենք չեն կարողանում և չեն գտնի այս ծագումը: Որովհետև հայերը Ասորեստանի և Ուրարտուի ստրկատիրական գաղութներում, ինչպիսիք են Հայասան և Արմեն, մասնագիտացվելով շուկա հանվող և աշխարհի տարբեր ծայրերից եկած վաճառականներին վաճառվող ստրուկներ էին: Սա է հիմնական պատճառը, որ հայերը արվեստագետ ժողովուրդ են և ստիպված են աշխարհով մեկ:*[81] Նախ համաժողովի վերնագիրն արդեն իսկ պարունակում է հայատյաց նոտաներ, հայերը ներկայացվում են որպես պատմությունը կեղծող ազգ: Ընդ որում այս պարագայում ևս հայերը մեղադրվում են Հարավային Կովկասի բոլոր դժբախտությունների մեջ: Սրանք էմոցիոնալ ձևակերպումներ են, որոնք ուղղված են ադրբեջանական հասարակության մեջ հայերի պատմական անցյալի մասին կեղծ պատկերացումներ կազմելուն և տարիներ շարունակ հրամցվող կեղծ պատմական թեզերը առաջ տանելուն: Նյութն արտատպվել է ավելի քան 9 կայքում:

[81] Հասանելի է այստեղ՝ https://news.milli.az/politics/1118329.html

ԳԼՈՒԽ 12

ՀԱՏՈՒԿ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՕՐԵՐ. ԵՌԱԿՈՂՄ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ, ԽՈՋԱԼՈՒԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՁԱՐԴԵՐ ԵՎ ԱՅԼՆ

Ադրբեջանական մամուլում ատելության խոսքի սրում նկատելի է նաև հատուկ օրացույցային օրերում, որոնք կարևոր նշանակություն ունեն ադրբեջանցիների համար և այս կամ այն կերպ կապված են հայերի հետ: Օրինակ՝ ատելության խոսքի սրում հատկապես նկատելի է նոյեմբեր ամսվա ընթացքում և հատկապես նոյեմբերի 9-ին՝ 44-օրյա պատերազմից հետո եռակողմ պայմանագրի կնքման օրը: Ադրբեջանում իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության (Yeni Azərbaycan Partiyasi) Սաբիրաբադի շրջանային կազմակերպության ղեկավար Վարիս Ռուստամովի հոդվածը տեղ է գտել yeniazerbaycan.com կայքում: Հոդվածում Ադրբեջանի իշխող կուսակցության ներկայացուցիչը անդրադարձել է 44-օրյա պատերազմին և դրան հաջորդած շրջանում հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա զարգացումներին նշելով. *«Հայկական բանակը ջախջախվեց, և զինադադարի նախօրեին անկազմակերպ, այլևս միասնական հրամանատարություն չունեցող, դիմադրելու ունակությունը կորցրած խելագար խմբերի հիշեցրեց»: «Իրենց բանակի մասին կեղծ տեղեկություններ էին տարածել ու միֆ էին ստեղծել, թե հայկական բանակն անպարտելի է: Ընդամենը 44 օրում ոչնչացվեց հայկական բանակը, ոչնչացվեց նրա ռազմական տեխնիկան, ոչնչացվեց կենդանի ուժը, իսկ Ադրբեջանն իր հզորությունն ու խիզախությունը ցույց տվեց աշխարհին»:*[82] Այստեղ նկատելի է ուղիղ ատելության խոսք ուղղված հայկական բանակին և հեղինակը միտում ունի ադրբեջանական հասարակությանը դարձյալ ցույց տալու և մատնանշելու, որ

[82] Հասանելի է այստեղ՝ yeniazerbaycan.com

հայկական բանակը թույլ է, անկարող և ադրբեջանական բանակը գերակա է հայկականի հանդեպ: Մատնանշելով հայկական բանակի թուլությունը, միևնույն ժամանակ հոդվածագիրը ընդգծում է ադրբեջանական բանակի հզորությունը՝ այս կերպ հասարակության մեջ ստեղծելով ադրբեջանական բանակի գերուժի և հայկական բանակի թուլության մասին միֆեր:

Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի խորհրդարանը (Միլի Մեջլիս) նոյեմբերի 9-ի Ադրբեջանի հաղթանակի օրվա կապակցությամբ հայտարարություն է տարածել, որտեղ նշված է. «*Այդպիսով Ադրբեջանի ժողովրդի դեմ թշնամական քաղաքականություն իրականացնող հայկական շովինիզմն ու էքսպանսիոնիզմը ծանր պարտություն կրեցին»*:[83] Երկրի կարևորագույն կառույցների մեկն իր հայտարարության մեջ Հայաստանը ներկայացնում է որպես շովինիստ և ծավալապաշտ երկիր՝ ձևավորելով կարծիք թե հայերը մշտապես ազգային թշնամանք, խտրականություն են քարոզել և մշտապես ծավալապաշտական նկրտումներ են ունեցել: Այս պարագայում ևս զգացվում է չափազանցության ընգդծումը, երբ նշվում է, որ ադրբեջանական կողմը պարտության մատնեց հայկական շովինիզմն ու էքսպանսիոնիզմը:

Ատելության խոսքը հայերի հանդեպ սրվում է նաև հայերի կողմից ադրբեջանցիների այսպես կոչված «ցեղասպանություն» իրականացրած օրերի ժամանակ: Օրինակ՝ Ադրբեջանի ՄԻՊ Սաբինա Ալիևան Բաշլիբելի ջարդերի 30-րդ տարելիցի կապակցությամբ դիմել է միջազգային հանրությանը, նշելով՝ *«Մարդկության դեմ այս արյունալի ցեղասպանության արդյունքում գյուղի բնակչությունը՝ երեխաներ, կանայք, հաշմանդամություն ունեցող անձիք, ծերեր, ենթարկվել են տարբեր դաժան խոշտանգումների և զանգվածային*

[83] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/daxili-siyaset/milli-meclis-8-noyabr-zefer-gunu-ile-elaqedar-beyanat-qebul-edib-yenilenib-1-731196?fbclid=IwAR3ewLe1TzbRJSUN-WqTAFcBxYE0Z4lB2bKhrBaxti8svkzXybpYIgQdRNU

սպանությունների, իսկ ոմանց նույնիսկ ողջ-ողջ այրել են: Միաժամանակ գյուղացիների մեջ եղել են գերևարվածներ, և անհայտ կորած համարվող այդ մարդկանց ճակատագրի մասին տեղեկություններ չկան»:[84] Այստեղ ներկայացված գործողություններն առանձնակի դաժանություն են պարունակում և ցանկացած ընթերցողի մոտ տպավորություն կարող են ստեղծել հայ ազգի դաժանության մասին: Տեքստի հիմնաքարը խոցելի խմբերին բռնության և խոշտանգումների թեման է, ինչը զգայական տեսանկյունից մեծ ազդեցություն ունի ընթերցողի վրա: Այս նյութն արտատպվել է շուրջ 11 կայքերում:

Ատելության խոսքի պարունակող հոդվածներ շատ են շրջանառվում նաև փետրվարի 25-26-ին, որոնք ադրբեջանցիների մոտ հիշատակվում են որպես Խոջալուի ցեղասպանության օրեր: Աբբասգուլու Աղա Բակըխանովի անվան պատմության ինստիտուտի (AMEA) ավագ գիտաշխատող Ռամին Ալիզադեի հոդվածը տեղ է գտել azertag.az-ում: Նա Հայաստանին մեղադրել է իբր ադրբեջանական տարբեր բնակավայրերում ջարդեր իրականացնելու մեջ: *«Հայկական ֆաշիզմի ամենադաժան արարքը 1992 թվականի փետրվարին իրականացված Խոջալուի ցեղասպանությունն էր: Սակայն մինչև Խոջալուի ցեղասպանությունը հայերը ջարդեր են իրականացրել Ղազախի շրջանի Բաղանիս Այրըմ գյուղում ադրբեջանցիների, Իմարաթ-Գարվանդ, Թուղ, Սալակետին, Միսուլլու Խոջավենդ, Ջամիլի, Նաբիլեր, Մեշալի, Հասանաբադ, Քարքիջահան, Գայբալը, Մալբեյլի, Յուխարը և Աշաղը Գուշչուլար, Ղարաբաղի Գարադաղլը գյուղերի խաղաղ բնակիչների դեմ: Նշենք, որ այս բոլոր գյուղերի բնակիչները ադրբեջանցի թուրքեր էին»:*[85] Հոդվածում կրկին օգտագործվում է «ֆաշիզմ» բառը, հայերը կրկին

---

[84] Հասանելի է այստեղ՝ https://report.az/daxili-siyaset/ombudsman-baslibel-qetliaminin-30-cu-ildonumu-ile-bagli-beynelxalq-ictmaiyyete-muraciet-edib/

[85] Հասանելի է այստեղ՝ https://azertag.az/xeber/Ermeni_fasizminin_qanli_emelleri___Baganis_Ayrim_Imaret_Qervend_Tug_Meseli_ve_Qaradagli_qetliamlari-2493326

մեղադրվում են բազմաքանակ ցեղասպանությունների մեջ՝ ընդ որում ադրբեջանցի թուրքերի ցեղասպանության: Նման ձևակերպումները կարող են իրենց բացասական ընկալումներն ունենալ թե՛ ադրբեջանական, թե՛ թուրք հասարակության մեջ:

Խոջալուի ցեղասպանության շուրջ անհիմն մեղադրանքներ նչել են նաև Ֆրանսիայի հասցեին: Ադրբեջանի Միլլի Մեջլիսի (խորհրդարան) պատգամավոր Ջավիդ Օսմանովը նոյեմբերի 16-ին կայացած խորհրդարանի լիագումար նիստի ժամանակ անդրադարձել է Ֆրանսիայի Հանրապետության Սենատի կողմից նոյեմբերի 15-ին ընդունված Հայաստանին աջակցող և Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ առաջարկող բանաձևին, նշելով. *«Հայերն իրականացրել են Խոջալուի ցեղասպանությունը: Այստեղից պարզ է դառնում, որ Ֆրանսիան աջակցել է Խոջալուի ցեղասպանությանը»*.[86] Այս պնդումը որևէ կերպ փաստարկված չէ և բացի փաստարկված չլինելուց առաջ քաշված երկու դատողությունները ոչ մի կերպ չեն կապվում միմյանց հետ, հետևաբար սա պարզապես զրպարտություն է ուղղված Ֆրանսիային:

Նույնաբովանդակ մեղադրանքներով լեցուն հրապարակումներ կատարվել են նաև պետական մակարդակով:[87] Ընդհանուր հաշվով Խոջալուի ցեղասպանության թեմայով հրապարակվել է ավելի քան 95 նյութ:

---

[86] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/fransa-elcezairde-ermenistan-azerbaycanda-minlerle-insani-qetle-yetirib-rey-732965

[87] Հասանելի է այստեղ՝ https://president.az/az/articles/view/59044

ԳԼՈՒԽ 13

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՏԱՐՈՂ ԿՈՂՄ» ԿԵՂԾ ԹԵԶԸ

Նոյեմբերի 9-ից հետո ադրբեջանական մամուլում շրջանառվող մյուս թեզը Հայաստանի կողմից եռակողմ համաձայնագրի պարտավորությունների ու տարբեր հանդիպումներում ձեռք բերված պայմանավորվածությունների չկատարումն է: Այս թեզն ամենաշատ շրջանառվող պատումներից է, որի շրջանակներում թիրախավորվել են ինչպես հայերը որպես հավաքական ազգ, այնպես էլ ՀՀ իշխանությունները և այն երկրները, որոնք որևէ միջոցով սատարել են Հայաստանին: Ընդ որում՝ այս թեզի շրջանակներում Հայաստանը մեղադրվում է պատերազմի ձգտման և խաղաղության օրակարգն ամբողջությամբ տապալելու մեջ: APA-ի մոսկովյան թղթակցի փոխանցմամբ՝ Ռուսաստանում Ադրբեջանի արտակարգ և լիազոր դեսպան Փոլադ Բյուլբյուլօղլուն ասել է.*«Պատերազմի ավարտից երկու տարի անց Ադրբեջանը կրկին համոզվեց, որ Հայաստանը խաղաղություն չի ուզում, նա նորից ապրում է ռեւանշիստական գաղափարներով, կիրառում է բանակցությունների իմիտացիայի պրակտիկա և իր պարտավորությունները ազնվորեն կատարելու փոխարեն հրաժարվում է դրանցից, սադրանքների է դիմում, չի դուրս բերում իր զինված ուժերը Ադրբեջանի ինքնիշխան տարածքից, նորից ականապատում է տարածքները և դրանով իսկ նոր սպառնալիքներ է ստեղծում տարածաշրջանում կայունության և անվտանգության համար»:*[88] Փաստորեն Հայաստանի կողմից իր պարտավորությունների չկատարումը համադրվում է նախորդ գլուխներում քննարկված մյուս թեզերի հետ, այսինքն՝ Հայաստանը

[88] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/sefir-polad-bulbuloglu-ermenistan-sulh-istemir-731713?fbclid=IwAR3aFaJ7X5gIxG6UAlYQEMwQAxu67Xl1zR1mu0KKIb_QYUOdYo5jCr-RGkI

չկատարելով իր պարտավորությունները, իրականացնում է բոլոր այն հանցագործությունները, որոնք քննարկվել են վերևում քննարկված գլուխներում:

Այս թեզի շրջանակներում ատելության խոսքի թիրախում հիմնականում ՀՀ իշխանություններն են, քանի որ իշխանության կրողն ու որոշումներ կայացնողները նրանք են, ուստի պարտավորությունների և պայմանավորվածությունների կատարումը եթե ոչ ամբողջապես, ապա մեծամասամբ կախված է նրանց որոշումներից, ուստի այս թեզի շրջանակներում հնչած ատելության խոսքը այս կամ այն կերպով հասցեագրված է ՀՀ իշխանություններին: Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության ղեկավարի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Ջեյհուն Շադլինսկին ելույթ է ունեցել Ադրբեջանի անվտանգության խորհրդի կողմից կազմակերպված *«Հայրենական պատերազմի փորձը»* թեմայով համաժողովին, որի ժամանակ նշել է.*«Հայաստանում ռևանշիստական ուժերը ողջ ներուժով փորձում են խոչընդոտել երկու երկրների հարաբերությունների կարգավորման ուղղությամբ կատարվող աշխատանքներին»: «Մտահոգիչ է այն փաստը, որ այս երկիրն իր ուժերից վեր միջոցներ է հատկացնում սպառազինության և բանակաշինության համար, փորձում է ժամանակակից սպառազինություն և ռազմական տեխնիկա գնել օտարերկրյա տարբեր երկրներից և հակված է հետաձգել խաղաղության համաձայնագրի ստորագրումը՝ օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները»:*[89] Այստեղ Հայաստանի իշխանությունները պիտակավորվում են «ռևանշիստական», ինչը տարածված պիտակ է ադրբեջանական մամուլում ուղղված Հայաստանի Հանրապետությանը: Նման ձևակերպումները թույլ են տալիս եզրակացնելու, որ Հայաստանը պատրաստվում է նոր պատերազմի և նույն ժամանակ չի ցանկանում խաղաղություն հաստատել տարածաշրջանում: Նման ենթադրությունները նպաստում են ՀՀ իշխանությունների հեղինակության անկմանը և նրա շուրջ

[89] Հասանելի է այստեղ՝https://apa.az/az/herbi/dtx-ermenistan-muasir-silahlar-almaga-cehd-gosterir-sulh-muqavilesinin-imzalanmasini-yubatmaga-meyil-edir-734237

ադրբեջանական հասարակության մեջ բացասական կարծիքի ձևավորմանը: Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ասուլիսի ժամանակ Հայաստանին մեղադրել է պարտավորությունները չկատարելու և օտարերկրյա պետությունների ղեկավարների մոտ «բամբասելու» մեջ: *«Պատերազմից հետո երկու տարվա ընթացքում Հայաստանը չի արել այն, ինչ պետք է աներ: Եթե մի կողմ թողնենք հոետորաբանությունն ու բողոքի այս ինտոնացիան, ապա գործնականում նա օտարերկրյա պետությունների ղեկավարների հետ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ միայն «խաբարբզիկություն-բողոք» է անում: Ես չեմ կարող դրա համար այլ անուն գտնել: Սա ուղղակի բամբասանք է, խաբարբզիկություն»:*[90] Նման ձևակերպումները ակնհայտ ծաղրանք են ուղղված ՀՀ իշխանություններին: Ատելության խոսք պարունակող այս հոդվածն արտատպվել է ավելի քան 11 կայքում: Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայությունը 2022թ-ի վերաբերյալ ամփոփիչ հաղորդագրություն է տարածել, որտեղ ՀՀ իշխանությունները մեղադրվում են ոչ միայն պարտավորությունները չկատարելու մեջ, այլև ռազմական և քաղաքական նոր սադրանքներ հրահրելու մեջ: Հաղորդագրության մեջ նշված է. *«Զնայած տարվա ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի միջև հետհակամարտային շրջանում կարգավորման ուղղությամբ երկկողմ շփումների մասնակի դինամիկային, կարգավորման բոլոր երեք ուղղություններով ձեռք բերված արդյունքը չի արդարացրել սպասելիքները: Սրա հիմնական պատճառն են Հայաստանի կողմից հարաբերությունների կարգավորման ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկելու համար անհրաժեշտ քաղաքական կամք չցուցաբերելը, հակասական և անհամապատասխան դիրքորոշումը, ձեռք բերված համաձայնագրի և ստանձնած պարտավորությունների կատարումից շարունակաբար խուսափելու ջանքերը,*

[90] Հասանելի է այստեղ՝ https://az.trend.az/azerbaijan/politics/3693399.html

մասնավորապես, կարգավորման ջանքերին հարվածելու համար քաղաքական և ռազմական սադրանքների դիմելը»:[91]

Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Սահիբա Գաֆարովան հունվարի 9-ին ելույթ է ունեցել *Ասիայի խորհրդարանական վեհաժողովի 13-րդ* լիագումար նիստում: Ելույթի ընթացքում նա շարունակել է ադրբեջանական պետական քարոզչամեքենայի կեղծ թեզերը և Հայաստանի հասցեին անհիմն մեղադրանքներ հնչեցրել:[92]

Պարտավորությունների չկատարման թեզն ակտիվորեն սկսեց շրջանառվել հատկապես Լաչինի միջանցքի փակումից հետո: Օրինակ՝ Ադրբեջանի ԱԳՆ-ի փոխացմամբ՝ 2023 թվականի հունվարի 10-ին հեռախոսազրույց են ունեցել Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը և Հյուսիսային Մակեդոնիայի արտաքին գործերի նախարար և ԵԱՀԿ գործող նախագահի պաշտոնակատար Բույար Օսմանին: Նախարարը նշել է, որ *«Հայաստանի կողմից Եռակողմ հռչակագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները կոպտորեն խախտելով միայն մարդասիրական նպատակների համար նախատեսված Լաչինի ճանապարհով Ադրբեջանի ապօրինի շահագործվող հանքային պաշարների Հայաստան տեղափոխումը, Հայաստանից 2021թ. արտադրված ականների տեղափոխմամբ ականային վտանգի շարունակումը, Ադրբեջանի տարածքից դեռևս դուրս չբերված Հայաստանի զինված ուժերի ապահովումը, երրորդ երկրների քաղաքացիների ապօրինի անցման նպատակով շահագործումը առաջ են բերել ադրբեջանական կողմի արդարացի բողոքը»:*[93] Նախարար Ջեյհուն Բայրամովը ուշադրության է արժանացրել այն փաստը, որ չնայած հետկոնֆլիկտային շրջանում ադրբեջանահայկական

---

[91] Հասանելի է այստեղ՝ https://mfa.gov.az/files/PR%20End-of%20Year%2028.12.2022.docx.pdf

[92] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/sahibe-qafarova-asiya-parlament-assambleyasinin-plenar-sessiyasinda-cixis-edib-741309?fbclid=IwAR0wvUSeEYWg7dqPXXQy6f86_Vmmu6iO0B52s2PYvXbaycl-YiqiDhDw4_Q

[93] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no00523

հարաբերությունների կարգավորման հետ կապված ադրբեջանական կողմի մի շարք կառուցողական նախաձեռնություններին, գործընթացը Հայաստանի կողմից խոչընդոտվել է տարբեր շարունակական սադրանքներով: Նախարար Ջեյհուն Բայրամովն ասել է, որ Ադրբեջանի կողմից Լաչինի ճանապարհի փակման հետևանքով հայ բնակիչների «շրջափակման» և տարածաշրջանում «մարդասիրական աղետի» առաջացման մասին պնդումները լիովին անհիմն են: Նա նշել է. «*Այն մարդիկ, ովքեր իրենց ներկայացնում են որպես տեղի հայերի առաջնորդներ, դեմ են բնակչության կողմից ճանապարհի օգտագործմանը»*[94]: Այս դեպքում ևս ակնհայտ է, որ ԱԳ նախարարը մի կողմից մեղադրում է Հայաստանին բանակցային գործընթացը խոչընդոտելու մեջ՝ ցույց տալով միջազգային հանրությանը, որ Հայաստանն ապակառուցողական երկիր է, մյուս կողմից փորձում է կապել պարտավորությունների չկատարումը Լաչինի միջանցքի փակման հետ՝ ապատեղեկատվություն տարածելով թե միջանցքում որևէ տեսակի շրջափակում չկա, ընդ որում նախարարը փորձում է նաև բացասական վերաբերմունք առաջացնել Արցախի իշխանությունների նկատմամբ՝ մատնաշելով թե հենց նրանք չեն ցանկանում, որ բնակչությունն օգտագործի ճանապարհը: Նման հայտարարություններն ուղղված են մի կողմից հեղինակազրկելու Հայաստանին, մյուս կողմից՝ ցույց տալու թե Արցախի իշխանությունները լեգիտիմ չեն և չեն սպասարկում Արցախի հայերի շահերը:

Տարածելով Հայաստանի կողմից իր պարտավորությունները չկատարելու թեզը՝ ադրբեջանական մամուլում տեղ են գտնում նաև այնպիսի հոդվածներ, որոնք մեղադրում են նաև օտարերկրյա պետություններին: Օրինակ՝ kaspi.az-անդրադարձել է հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա իրավիճակին, Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի Եվրոպական միության խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ունեցած ելույթին, ինչպես նաև

[94] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no00623

թեմային առնչվող հարցազրույցներ արել Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Էլշադ Միրբաշիրի և ադրբեջանցի քաղաքագետ Նաթիգ Միրիյի հետ: Հոդվածում նշվում է. *«Հարավային Կովկասում կայունության համար խոչընդոտ հանդիսացող Հայաստանը դեռ փորձում է վերադառնալ 2020 թվականից առաջ ունեցած հեղինարաբանությանը: Օտարերկրյա հովանավորները կրկին խրախուսում են հայերին: Հայաստանի պաշտոնյաները սկսել են խոսել ռազմական ուժի կիրառման մասին: Բայց նրանք չեն հասկանում, որ այս կոչերով իրենք իրենց կարող են մահապատժի դատապարտել»,-գրում է թերթը: «Հայաստանը շարունակում է իր խանգարիչ գործունեությունը: Այն պահին, երբ մենք պաշտոնական Երևանից ակնկալում ենք խաղաղության պայմանագրի վերաբերյալ ավելի կառուցողական դիրքորոշում, մյուս կողմը ցանկանում է վերադառնալ հին ուղիներին»*[95]: Նախ հոդվածն արդեն իսկ մեղադրանքների շարան է ուղղված Հայաստանին և նրա քաղաքականությանը և միևնույն ժամանակ «օտարերկրյա հովանավորներ» ձևակերպումները ուղղված են այն պետություններին, որոնք սատարում են Հայաստանին, ուստի Հայաստանին վերագրվող բոլոր մեղադրանքներն ու ակնհայտ ապատեղեկատվությունը ևս վերագրվում է այս պետություններին: Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի ԱԳՆ-ն մեկնաբանել է ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանի և Լյուքսեմբուրգի արտաքին գործերի եվրոպական հարցերով նախարար Յան Ասելբորնի հայտարարությունները: Մեկնաբանության մեջ մասնավորապես նշված է. *«Երևում է, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա լյուքսեմբուրգյան կողմը չի հրաժարվել հայկական կողմի կեղծ քարոզչությունն արտացոլող թեզերի կիրառման պրակտիկայից»*:[96] Այս պարագայում ևս լյուքսեմբուրգյան կողմը ներկայացվում է որպես «կեղծ» քարոզչությունից օգտվող մի երկիր: Անհրաժեշտ է ընդգծել, որ մեկնաբանությունն արվել է պետական բարձր գերատեսչության մակարդակով, ինչը

---

[95]Հասանելի է այստեղ՝ https://kaspi.az/irevanin-tehdidi-cavabsiz-qalmamalidir?fbclid=IwAR2jj5kpEtgk5rW1E8YyUCNh6VSp7WKWthYtNw_PMQrgLJ4BU-BD68JHFEc

[96] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no08423

բացահայտորեն կարող է բացասական տրամադրվածություն առաջացնել ադրբեջանական հասարակության մոտ ուղղված Լյուքսեմբուրգին:

Ինչպես մյուս բոլորի թեզերի, այս պատումի դեպքում ևս ադրբեջանական կողմը ապատեղեկատվություններով լի հայտարարություններով է հանդես եկել միջազգային գործընկերների հետ հանդիպումների և հեռախոսազրույցների ժամանակ: Օրինակ՝ Բաքվում տեղի ունեցած Հյուսիսային Մակեդոնիայի արտաքին գործերի նախարար և ԵԱՀԿ գործող նախագահ Բույար Օսմանիի և Ջեյհուն Բայրամովի համատեղ ասուլիսի ժամանակ, Բայրամովը նշել է. *«Երբ դրական քայլեր են արվում Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, մենք ականատես ենք լինում Հայաստանի քաղաքական և ռազմական սադրանքներին»: «Ադրբեջանական կողմը հետաքննում է հարցը, սակայն նախնական կարծիքների հիման վրա պարզ է դառնում, որ սա ծրագրված սադրանք էր: Այն, որ այնտեղ գտնվել է հատուկ նշանակության կորպուսի հրամանատարը, վկայում է այն մասին, որ դա արվել է ոչ թե շարքային զինվորի, այլ նրանց հրահանգով: Սա եւս մեկ անգամ ցույց է տալիս, որ այս սադրանքի հետեւում ծրագիր է եղել»:*[97] Հայաստանի կողմից պարտավորությունների չկատարման, ռազմական սադրանքներ հրահրելու, ապօրինի գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև միջազգային հանցագործությունների մասին նույնաբովանդակ հայտարարություններ են արվել Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի և Մեծ Բրիտանիայի եվրոպական տարածաշրջանի պետնախարար Լեո Դոկերտիի հետ հեռախոսազրույցի[98], Հունգարիայի արտաքին գործերի և առևտրի նախարար Պետեր Սիյարտոյի[99], Ադրբեջանում Շվեյցարիայի Համադաշնության դեսպան Մյուրիել Պենևեյր[100], Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի

---

[97] Հասանելի է այստեղ՝ https://azpolitika.info/?p=711548
[98] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no05523
[99] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no05023
[100] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no05723

նախարար Սերգեյ Լավրովի գլխավորած պատվիրակության[101], ԱՄՆ Պետդեպարտամենտի կովկասյան բանակցությունների գծով գլխավոր խորհրդական Լուի Բոնոյի[102] հետ հանդիպումների ժամանակ: Նման մասշտաբի քարոզչական գործունեությունը միտում ունի միջազգային հարթակներում թուլացնել Հայաստանի դերը, ներկայացնել Հայաստանը որպես անպատասխանատու, պարտավորությունները չկատարող և սադրանքներ հրահրող պետության:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ այս թեզի շրջանակներում Հայաստանը մեղադրվում է նաև բանակցային գործընթացը տապալելու և դրանից բխող բոլոր գործողությունների մեջ: Օրինակ՝ Ադրբեջանի ԱԳՆ-ն պատասխանել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից կառավարության նիստի ժամանակ հնչեցված մտքերին, նշելով՝ *«Հայաստանի կողմից նշված հարցը մանիպուլյացիայի և խաղաղ գործընթացին խոչընդոտելու նպատակով որպես ավանդական ագրեսիայի քաղաքականության տարր օգտագործելը անընդունելի է»: «Հայաստանի կողմից հնչեցված և Ադրբեջանի ինքնիշխանությանն ուղղված նման տեսակետները, ինչպես նաև տարածաշրջանում իրականացվող ռազմական սադրանքները ցույց են տալիս, որ այդ երկրի հայտարարություններն այն մասին, որ ինքը «խաղաղություն հաստատելու համար բոլոր ջանքերը գործադրող կողմ է, հեռու են անկեղծ լինելուց»:*[103] Մեկ այլ օրինակում T.C Eskşehir Osmangazi համալսարանի ուսանող, Ադրբեջանում *իշխող «Նոր Ադրբեջան»* կուսակցության Խաթայի շրջանային կազմակերպության ակտիվ անդամ Օրխան Իսմայիլովը ikisahil.a-ում *«Հայաստանի ռազմական հանցագործությունները»* վերնագրով հոդված է հրապարակել, որտեղ նշված է. *«Հենց որ բանակցային գործընթացում փոքր-ինչ առաջընթաց եղավ, անմիջապես ռազմական սադրանք կատարվեց՝ հարձակվեց խաղաղ բնակչության*

---

[101] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no09723
[102] Հասանելի է այստեղ՝ https://www.mfa.gov.az/az/news/no14223
[103] Հասանելի է այստեղ՝ https://apa.az/az/xarici-siyaset/azerbaycan-xin-pasinyana-cavab-verib-

վրա և խաթարեց բանակցությունները: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից առաջ՝ հուլիս-օգոստոս ամիսներին, նմանատիպ ռազմական ագրեսիա իրականացրեց: Հուլիսին մեր խաղաղ բնակչության ու զինվորների վրա հրետանային կրակոցներ արձակեցին:»[104] Հայաստանն այստեղ մեղադրվում է ոչ միայն բանակցային գործընթացը տապալելու, այլ նաև հուլիսյան դեպքերը կազմակերպելու և խաղաղ բնակչության վրա հարձակվելու համար, ինչը միջազգայնորեն խոր դատապարտելի երևույթ է: Ատելության խոսքի, պատմական փաստերի խեղաթյուրման, սուր ընդգծված ազգայնամոլության չափազանց մեծ չափաբաժին պարունակող այս հոդվածը ունեցել է 10.165 ընթերցում:

[104] Հասանելի է այստեղ՝ https://ikisahil.az/post/366165-ermenistanin-herbi-cinayetleri-2

ԳԼՈՒԽ 14

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՀԱՐՑԸ

Պատկեր 8. Թուրքական իշխանամերձ «Sabah» թերթի կայքում 2022 թվականին հրապարակված «Թուրանի ճանապարհն է գալիս. Թյուրքական պետությունները իրար է միացնելու» վերտառությամբ հոդվածից պատկեր, որտեղ անդրադարձ է կատարվել «Զանգեզուրի միջանցքին»՝ որպես «Թուրանի ճանապարհ»:

Նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրից հետո ադրբեջանական մամուլում հայերի նկատմամբ ատելության խոսք պարունակող թեզերից են նաև Զանգեզուրի միջանցքին վերաբերող հարցերը: Զանգեզուր միջանցքի շուրջ ատելության խոսքը հիմնականում ուղղված է եղել ՀՀ իշխանություններին՝ միջանցքի բացման աշխատանքներին խոչընդոտելու, պարտավորություններ չկատարելու և այլ հարցերի շուրջ: Իլհամ Ալիևը ADA համալսարանի կողմից կազմակերպված *«Միջին միջանցքի երկայնքով. աշխարհաքաղաքականություն, անվտանգություն և տնտեսություն»* միջազգային համաժողովի ժամանակ անդրադարձել է այսպես կոչված Զանգեզուրի

միջանցքի հարցին և Հայաստանի վերաբերյալ որոշ վիրավորական ձևակերպումներ արել: *«Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ մեր քննարկումներն իրականում ոչ թե Հայաստանի, այլ Ռուսաստանի հետ ենք վարում: Որովհետև Հայաստանը կախյալ երկիր է: Նրա անկախությունը շատ խորհրդանշական է: Ուստի մենք չենք ուզում ժամանակ վատնել նրանց հետ բանակցելու համար, մենք բանակցում ենք Ռուսաստանի հետ»:*[105] Այստեղ Ալիևը փաստացի կասկածի տակ է դնում Հայաստանի ինքնիշխանությունն ու անկախությունը և մատնանշում, որ Հայաստանն այնքան թույլ պետություն է, որ նրա հետ բանակցություններն անգամ Զանգեզուրի միջանցքի հետ կապված չեն կարող լինել: Սա բացահայտ ծաղրի դրսևորվում է: Այս նյութն արտատպվել է ավելի քան 30 կայքերում:

Մեկ այլ օրինակում՝ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ֆազիլ Մուստաֆան խորհրդարանի նիստի ժամանակ կոչ է արել ի հակադրություն Ստեփանակերտում անցկացված հանրահավաքի Նախիջևանում ակցիաներ կազմակերպել, նշելով. *«Առաջարկում եմ, որ համարժեք պատասխան տանք հայերին ու Նախիջևանում ճանապարհը բացելու պահանջով հանրահավաք կազմակերպենք ու տարածենք աշխարհին: Եթե հայերը դա ներկայացնում են աշխարհում, եկեք մենք էլ աշխարհին հասցնենք, որ Նախիջևանը շարունակում է մնալ շրջափակման մեջ: Հայերի հետ քարոզչության մեջ չպետք է պարտվենք: Մեր դիվանագիտությունն էլ ձեռքին գործիք կունենա»:*[106] Հարկ ենք համարում նշել, որ ադրբեջանցի պատգամավորի կողմից շրջանառված ատելություն հրահրող այս միտքը սկսում է ադրբեջանական տիրույթում տարբեր ձևակերպումներով ավելի շատ քննարկվել: Փորձ է արվում այս կեղծ պնդումը, իբր Հայաստանը «Զանգեզուրի միջանցքը» չտրամադրելով Նախիջևանը շրջափակման մեջ է պահում, հակադրել

---

[105] Հասանելի է այստեղ՝ https://president.az/az/articles/view/57968

[106] Հասանելի է այստեղ՝ https://sozcu.az/?p=151442

Արցախի և այնտեղ գտնվող ավելի քան 120 հազար անձի լիակատար շրջափակման մեջ պահելու և հումանիտար աղետի առաջ կանգնեցնելու Ադրբեջանի հանցավոր արարքին: Սա նաև ուղիղ կերպով քաղաքացիական անհնազանդության կոչ է: